

ՀՅԴ Պատմութիւն

ԴՐՕՇԱԿ

Ամրիլ N04 (1631)

2011

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմութիւն

Լիբանան,
Անթիլիաս

Սիրիա,
Դեր-Զոր

Արգենտինա,
Բուենոս-Այրես

Ֆրանսիա,
Էքս ան Պրովանս

Հայաստան
Արագածոտնի մարզ, Ուջան

Իտալիա,
Ուդին



Բելգիա,
Անտվերպեն

Լինանան,
Բեյրութ

Ռուսաստան,
Դոնի-Ռոստով

ԼՂՀ,
Քերեռոր



Ավստրիա,
Վիեննա

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պաշտօնաթերթ

«Դրօշակ»
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**

Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի

Ձեւավորումը՝ **Ա. Գրիգորյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Միհր Մկրտչյան 12/1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Մէկ դաս, երկու բաղադրիչ 2

Սոցիալ-տնտեսական

Հայաստանի մրցակցությունը՝ Թուրքիայի հետ արտաքին առևտրի օրինակով 4

Հարցազրույց

«Դրօշակի» հարցերին պատասխանում է ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը 11

ԼՂՀ-20

Այն հուզումնալից օրերին 13

Տարածաշրջան

«Հայաստան և Ադրբեջան. կանխելով պատերազմը» 17

Ադրբեջանի ռազմականացումը 21

Հայ դաս

Արևմտյան Հայաստան. բնիկ ժողովրդի իրավատիրությունը 30

ՀՀ Ազգային ժողով

Նախագիծ 36

Խոսք հիշատակի

Նա գալիս էր Արևմտահայաստանից... 42

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Շրջաբերական 44

Նոր գրքեր

Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ 46

Պատկերասրահ

Հրաչ Հայրապետյան 48

Digitized by ARF PR Office

Մէկ դատ, երկու բաղադրիչ

Հայ Դատն ունի պատմական, բարոյական, իրաւական եւ քաղաքական էական կողմեր ու հիմնաւորումներ եւ խտանում է հետեւեալ կէտերում.

ա. Ամբողջական Հայաստանի ստեղծում՝ Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանի տարածքներում: Արցախի հարցի արդար լուծումը հանդիսանում է Հայ Դատի հանգրուաններից մէկը:

բ. Սփիւռքի տարագիր հայութեան համախմբում՝ իր հայրենի հողերի վրայ:

գ. Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի կերտում:

ՀՅԴ Ծրագիր, 1998թ.

Մեր ազգային հիմնահարցը, պահանջատիրութիւնը «Հարց»-ի հարթութիւնից փոխադրուել է «Դատ»-ի հարթութիւն այն ժամանակներից ի վեր, երբ Վուդրօ Վիլսոնի իրաւարար վճռով մեր հայրենատիրական ձգտումներին հաղորդուեց իրաւական հիմք, իսկ թուրքական պետութեան կողմից մեր ազգի ծրագրուած ոչնչացման ոճրագործութիւնը, «Ցեղասպանութեան կոնվենցիա»-ով, համարուեց միջազգային իրաւունքով սահմանուած յանցանք:

Պատմաքաղաքական դիտանկիւնից, նշուած երկու հիմնաւորումները ենթակայ են միեւնոյն տրամաբանութեան, սակայն, զուտ իրաւագիտական իմաստով, ինքնուրոյն բաղադրիչներ են, որոնք պէտք է միատեղ կամ զուգահեռ առաջադրել, որպէս պահանջատիրական հայց: Սխալ է կարծել, թէ այս հիմնաւորումներն իրաւականօրէն պայմանաւորուած են միմեանցով, եւ մեկի բաւարարմամբ՝ միւսն էլ է ինքնաբերաբար բաւարարուելու: Հետեւաբար սխալ է կարծել, թէ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումը, անհրաժեշտաբար, յանգեցնելու է տարածքային հատուցման: Եթէ նոյնիսկ չլինէր 1915-

18թթ. ցեղասպանությունը, այլ լինէր միայն Վիլսոնի 1920թ. նոյեմբերի վճիռը, ապա մեր ազատագրական պայքարը, մեր պահանջատիրությունը դրանից չէր դադարի:

Ցեղասպանության ճանաչումը եղել եւ պէտք է մնայ Հայ Դատի առանցքային պահանջներից մէկը: Սակայն չի կարելի միայն ցեղասպանության հարցով սահմանափակել մեր պահանջատիրությունը: Սա նշանակում է ինքնակամ հրաժարուել ոչ միայն պատմական իրաւունքից, այլեւ միջազգայնօրէն ճանաչուած իրաւական այնպիսի լծակից, ինչպիսին վիլսոնեան իրաւարար վճիռն է, որի նախադէպը դժուար է գտնել մարդկության պատմության մէջ, եւ որի նմանը, հազիւ թէ, վերստին, ձեռք բերի հայությունը:

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը, ըստ ամենայնի, նպաստաւոր պայմաններ կարող է ստեղծել Վիլսոնի իրաւարար վճռի իրագործման համար: Սակայն դա հնարաւոր է պայմանով, որ մեր պահանջատիրության այդ բաղադրիչը, իրաւական հայցի ձեւով, արդէն ներկայացուած լինի միջազգային պատկան ատեաններին:

Ցեղասպանության կամ այլ պատերազմական յանցագործությունների հատուցումը, հիմնականում, պատկերացում է ֆինանսների եւ ոչ թէ, յատկապէս, տարածքների վերադարձի տեսքով: Մի պահ պատկերացնենք, որ Թուրքիան, ինչ-որ հրաշքով, ճանաչի Հայոց ցեղասպանության իրողությունը, ներողություն խնդրի ու մինչեւ իսկ վնասի հատուցում առաջարկի հայկական կողմին: Տուեալ դէպքում, եթէ նախապատրաստական շարժի մէջ դրուած չլինի տարածքային պահանջի իրաւական բաղադրիչը, ապա չափազանց դժուար կը լինի բարձրացնել մեր բռնագրաւուած հայրենիքին վերատիրանալու հարցը:

Մարտավարական նկատառումներով, եթէ դեռ չի արծարծուել տարածքային պահանջը, ապա դա չի նշանակում, թէ պէտք է իսպառ մոռացության տալ այդ բաղադրիչը: Առաւել եւս՝ չի նշանակում, թէ պէտք է շարունակել առկայ միառանցքեայ ընթացքը:

Ներկայիս քաղաքական պայմանները, իհարկէ, նպաստաւոր չեն միւս բաղադրիչը եւս մէջտեղ բերելու համար: Սակայն պէտք է գիտակցել, որ այս առումով քաղաքական առաւել բարենպաստ պայմաններ հազիւ թէ գոյանան, իսկ գոյացման դէպքում էլ՝ միշտ չէ, որ հնարաւոր է լինում օգտուել դրանցից, եթէ պատրաստ չենք տակաւին:

Հայաստանի ու հայության ազգային շահերից մեկնելով, պէտք է այլեւս խորհել Հայ Դատի միւս բաղադրիչի՝ տարածքային պահանջի ուղղությամբ եւս ընթանալու մասին, ինչը ենթադրում է ոչ միայն համազգային գաղափար ու կամք, այլեւ պետական միտք ու մօտեցում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Տնտեսական անվտանգության մասնակի դիտարկումներ

Արսեն Պետրոսյան
«Տնտեսական անվտանգության աջակցության նախաձեռնություն» հիմնադրամի տնօրեն

Ներածություն

Այսօր Հայաստանը վերածվել է կապիտալիստական աշխարհի դասական եզրամասային պետության, որը սպասարկում է հզոր պետությունների տնտեսությունների հումքային կարիքները[1]: Մեծ հաշվով, բացառություն չէ նաև Թուրքիայի հետ տնտեսական հարաբերությունը, այս դեպքում, ցավոք, բացի հումքի արտահանումից, առկա է նաև գրեթե ամեն ինչի ներմուծում Թուրքիայից: Թուրքիայի հետ Հայաստանի առևտրի հաշվեկիշռը ի վնաս մեզ է ավելի քան 148 անգամ՝ 2009-ին ըստ ԱՎԾ տվյալների Հայաստանից Թուրքիա է արտահանվել 1,2 մլն. ԱՄՆ դոլարի ապրանք, փոխարենը ներմուծվել է 177,6 մլն. ԱՄՆ դոլարի թուրքական ապրանք: Թերևս Թուրքիան մեկն է այն սակավաթիվ երկրներից, ում հետ Հայաստանի արտաքին առևտրի վիճակագրությունը բավականին ճշգրիտ արտացոլում է Հայաստանի տնտեսության վիճակն ու այնտեղ վարվող (բացակայող) քաղաքականության «ձեռնահասությունը»:

1. Արա Նռանյան, «Արտահանման խրախուսումը որպես երկրի զարգացման ռազմավարություն», «Սոցիալական մոտեցումներ Հայաստանի մարտահրավերներին. Գլոբալ հեռանկարներ, տեղական իրողություններ» խորհրդաժողովի նյութեր, Երևան, 2010, էջ 336:

Ցանկալի է շատ չշեղվել հոդվածի ի սկզբանե նպատակադրվածությունից (հետևաբար՝ նաև ոճից), այն է՝ փաստացի վիճակագրական տվյալների փոխանցում և տնտեսության իրավիճակի որոշակի պատկերի արտացոլում՝ ազգային անվտանգության, մասնավորապես ՀՀ տնտեսական անվտանգության համատեքստում միտումներն ընկալելու և հետևություններ անելու համար: Ուստի որպես ասելիքի ներածություն կատարենք հակիրճ հիշատակումներ վերջին տարիների մեր հասարակական-տնտեսական կյանքից, ինչպես նաև՝ քաղվածքների ձևով որոշ մեջբերումներ Հայաստանի կարևորագույն նորմատիվ իրավական ակտերից:

Հայաստանի պետական պաշտոնյաների՝ Թուրքիայում հանգստանալու «ոչ պաշտոնական» արգելքը մեկ անգամ չէ, որ «գործել» է, իսկ այսօր, հոդվածում բերված՝ Թուրքիայի հետ **հարաբերվելու** մասնավոր բնագավառի՝ արտաքին առևտրի, պատկերը «մարսելուց» հետո փորձենք հասկանալ տարիներ շարունակ եղած այդ արգելքի ձևական ու էական կողմերի հարաբերակցությունը...

Պետության գործադիր մարմնի՝ էկոնոմիկայի համար պատասխանատու թևի **պատասխանատուների** հաճախակի փոփոխություններում ոչ մի տրամաբանություն չի նշմարվում մեր ունեցած ներկա և առաջիկա մարտահրավերներին դիմակայելու և պետության ստանձնած գործառույթներն իրականացնելու առումով. իշխանությունն աճում է թվաքանակով, «փոխակերպվում» ու «թանկանում» է, իսկ վերջինիս խորհրդատուներն ու որոշումներ կայացնողներն առաջվա նման ոչ մի կերպ **պատասխան չեն տալիս** տնտեսությունում տիրող իրավիճակի ու առկա միտումների համար:

ՀՀ Նախագահի 2007 թվականի հրամանագրով հաստատված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության 2-րդ՝ «Ազգային անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները» կետում կարդում ենք, որ ազգային անվտանգության հիմնարար արժեքներին ծառայող գործոններն ու գործողություններն են, մասնավորապես, շուկայական հարաբերությունների խորացումն ու արմատավորումը, տնտեսության գիտատար, ինովացիոն, **արտահանմանն ուղղված ճյուղերի խթանումը**: Նույն փաստաթղթի 3-րդ կետում կարդում ենք, որ Հայաստանն իր կայուն տնտեսական առաջընթացի ապահովման գործում կարևորում է, մասնավորապես,

- **տնտեսության մրցունակության բարձրացումը**,
- **արտահանման խթանումը**,
- բնակչության կենսաբանական անվտանգության և երկրի պարենային անվտանգության ապահովումը, այդ թվում՝ ... **ներմուծման և արտահանման հաշվեկշռի բարելավումը**:

Փաստաթղթի եզրափակիչ դրույթներում արձանագրված է, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթները կենսագործվում են ՀՀ արտաքին քաղաքական, ռազմական, **տնտեսական**, պարենային, էներգետիկ, բնապահպանական, հաղորդակցական և տեղեկատվական անվտանգության, ժողովրդագրական, գիտակրթական, հոգևոր-մշակութային **զարգացումների հայեցակարգերի և դրանցից բխող նպատակային ծրագրերի** հիման վրա, որոնք, ՀՀ Սահմանադրության 85-րդ, 86-րդ և 89-րդ հոդվածների պահանջներից ելնելով, մշակում է ՀՀ կառավարությունը:

«**Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի** 4-րդ հոդվածի համաձայն՝ նշված օրենքի իմաստով ներքին շուկայի պաշտպանության միջոցառումներ են հանդիսանում ապրանքի ներմուծման մաքսատուրքի գործող դրույքաչափի բարձրացումը, ապրանքի ներմուծման վրա սակագնային քվոտայի կիրառումը, ապրանքի ներմուծման վրա քանակական սահմանափակման (քվոտա) կիրառումն ու նշված միջոցառումների ցանկացած համակցությամբ կիրառումը: Ներմուծվող ապրանքների նկատմամբ ներքին շուկայի պաշտպանության միջոցառումներ կիրառվում են միայն այն դեպքում, երբ օրենքով սահմանված կարգով իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ ուսումնասիրվող **ապրանքը ՀՀ տարածք է ներմուծվում այնպիսի աճող ծավալներով (բացարձակ կամ տնտեսության ճյուղի արտադրության ծավալների նկատմամբ հարաբերական առումով) և պայմաններով, որոնք լուրջ վնաս են հասցնում տընտեսության ճյուղին կամ ստեղծում են լուրջ վնասի վտանգ**: Նշված օրենքը նախատեսում է նաև, որ համապատասխան դեպքերում տեղի ունենան ներքին շուկայի պաշտպանության միջոցառումների շուրջ խորհրդակցություններ լիազոր մարմնի և տնտեսության ճյուղի տնտեսավարող սուբյեկտների միջև: Խորհրդակցությունների ընթացքում պետք է քննարկվեն ուսումնասիրվող **ապրանքի ներմուծման միտումների և պայմանների, դրա հետ կապված տնտեսական ու առևտրային իրադրության** և կիրառվելիք միջոցառումների հետ կապված հարցեր:

«**Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի** 2-րդ հոդվածի համաձայն՝ պարենային անվտանգության ապահովման ոլորտի պետական քաղաքականության հիմնական ուղղություններից է նվազագույն պարենային զամբյուղի կառուցվածքում ընդգրկված սննդամթերքի **տեղական արտադրության և ներմուծման հաշվեկշռի** կազմումը և դրա վերաբերյալ տեղեկատվության հավաքման և վերլուծության ապահովումը:

Հայաստան–Թուրքիա. առևտրատնտեսական ակնարկ. 2007-2009

Այժմ տեսնենք, թե վերոնշյալի առումով ինչ ունենք մենք Թուրքիայի հետ առևտրա-տնտեսական կյանքի ասպարեզում[2]:

Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, որպես Հայաստանին ապրանքներ մատակարարող երկիր Թուրքիան գրավում է 4-րդ տեղը՝ Ռուսաստանից, Չինաստանից և Ուկրաինայից հետո, իսկ որպես արտահանման երկիր Թուրքիան Հայաստանի համար 15-րդն է:

2007-2009 թվականներին, երբ Հայաստանն ունեցել է համապատասխանաբար 1152, 1057 և 710 մլն. ԱՄՆ դոլարի արտահանում, դրանցում Թուրքիա արտահանվող ապրանքների տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար 0,3, 02 և 0,2 տոկոս: Նույն ժամանակաշրջանում Հայաստան ներկրվող ապրանքների ծավալում, որոնք գերազանցել են արտահանման ծավալները 2,8-ից 4,7 անգամ (համապատասխան տարիներին 2,8, 4,2 և 4,7), թուրքական ապրանքների տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար՝ 2007-ին 4,0%, 2008-ին 6,1%, 2009-ին 5,3%:

2. Վերլուծության տվյալները վերցված են ինչպես ՀՀ ԱՎԾ-ի, այնպես էլ աշխարհի երկրների արտաքին առևտրի ցուցանիշների համադրում և ամփոփում իրականացնող միջազգային կազմակերպության աղբյուրներից և կարող են որոշ չափով չհամընկնել ԱՎԾ տվյալների հետ:

Այժմ բացարձակ թվերով. այսպես, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ 2007-2009 թվականներին Հայաստանից Թուրքիա են արտահանվել մոտ 6 մլն. ԱՄՆ դոլարի ապրանքներ: Նույն ժամանակահատվածում Հայաստան է ներմուծվել մոտ 576 մլն. ԱՄՆ դոլարի թուրքական ապրանք: Բազմապատիկ հարաբերությունը կազմում է շուրջ 95 անգամ:

Առավել մտահոգիչ են արտահանման և ներմուծման կառուցվածքները, ինչպես նաև առկա միտումները: Այսպես, Հայաստանից Թուրքիա արտահանվում են ավելի քիչ, քան երկու տասնյակ խումբ ապրանքներ: Փոխարենը Թուրքիան մեզ մատակարարում է շուրջ ութ տասնյակ խումբ ապրանքատեսակների ու դրանց մեջ նաև այնպիսիք, որոնց ներմուծումը մեր կողմից՝ պարսավանք ու ամոթ են յոթանասունամյա Խորհրդային Հայաստանի արդյունաբերությանն ու մեր անկախացած տնտեսության ավելի քան քսանամյա ուղուն: Սնունդ, պլաստմասսայե, փայտյա, ապակյա ու մետաղյա ամենաբազմազան իրեր՝ մեծ ու փոքր, սկսած թանկարժեք էլեկտրասարքավորումներից ու շինարարական գործիքներից, վերջացրած խոհանոցային պարագաներով ու կենցաղային «1000 ու մի» մանրուքով: Հաճախ սկզբունքորեն անգամ հնարավոր չէ ներքին շուկայում գտնել թուրքական այս կամ այն ապրանքին որևէ այլընտրանք:

Հայաստանի ներմուծումը 2007-ի 18,7 մլն.-ից 2009-ին հասել է 37,7 մլն.-ի՝ համապատասխան ապրանքախմբերի Թուրքիայի արտահանման մեջ 2007-ի 0,1%-ից 2009–ին արդեն կազմելով 0,3%: Այսինքն, այս ապրանքատեսակների՝ Թուրքիայի ընդհանուր արտահանման մեջ նկատվում է միտում դեպի Հայաստան արտահանվող ծավալի տեսակարար կշռի ավելացման: Կարի արտադրանք, գործվածքեղեն, հագուստի պարագաներ, ալյումին և դրանից պարագաներ, խառն ապրանքներ ոչ թանկարժեք մետաղներից, ապակի և ապակուց տարբեր ապրանքներ, խառը քիմիական ապրանք, տարբեր կոշկեղեն և դրանց կիսապատրաստուկներ (մասեր), պայթուցիկ նյութեր, լուցկի, հրավառության պարագաներ, կահույք և լուսավորության պարագաներ և այլն: Տարեցտարի հարևան երկրի այս ապրանքախմբերի արտահանման մեջ Հայաստան եկող ապրանքների տեսակարար կշիռը բարձրանում է մնացած այլ երկրներ մատակարարվող ծավալների համեմատ:

Ընդհանուր վերցրած Հայաստանը 2007-ին Թուրքիայից ներմուծել է շուրջ 31 մլն. դոլարի, իսկ 2009–ին՝ շուրջ 57 մլն.-ի, որն իր տվյալ ապրանքների ընդհանուր ներմուծման մեջ կազմել է 2009–ին 12%՝ 2007-ի 5,8%–ի դիմաց: Տարբեր ապրանքախմբերի մասով Թուրքիայից ներմուծման տեսակարար կշիռը համապատասխան ապրանքախմբերին պատկանող ապրանքների ընդհանուր ներմուծման մեջ կրկնապատկվել ու եռապատկվել է, իսկ այնպիսի ապրանքախմբերին պատկանող ապրանքների մասով, ինչպիսիք են, օրինակ, հագուստ, գործվածք և հագուստի պարագաները, թուրքական ապրանքների տեսակարար կշիռը 2009-ին կազմել է այս ապրանքների ընդհանուր ներմուծման ծավալի ավելի քան 23 %-ը (2007-ի 7%-ի դիմաց), մածիկներ, լցանյութեր, ներկանյութեր, պիգմենտներ և այլ քիմիական արտադրանքի մասով Թուրքիայից ներմուծում ենք այս խումբ ապրանքների ընդհանուր ներմուծման ավելի քան 32%–ը, տարբեր կոշկեղեն և դրանց կիսապատրաստուկներ (մասեր) ապրանքների մասով թուրքականը կազմում է ներմուծման 10%-ը, այն դեպքում, երբ 2007–ին կազմել է 5%, ապակի և ապակուց տարբեր ապրանքների տեսակա-

դար կշիռը դիտարկվող ժամանակաշրջանում աճել է 3 անգամ: Արտահանմանը վերաբերող այս հատվածում ստիպված ենք խոսել ոչ թե միլիոն, այլ հազար դոլարներով, քանի որ դեպի Թուրքիա մեր արտահանումը չի կազմում ներմուծվող թուրքական ապրանքների անգամ 1%-ը:

2009-ին դեպի Թուրքիա արտահանման 81%-ը կազմում էր «Ալյումին և դրանից իրեր» խումբը: Ընդ որում, եթե այդ տարվա արտահանած 721 հազար դոլար կազմող ողջ տեսականին վերաբերում է ալյումինե թիթեղին (ֆոլգա 0,2 մմ ոչ ավելի հաստությամբ), ապա 2008-ի և 2007-ի նույն ապրանքախմբի ողջ արտահանումը, համապատասխանաբար՝ Հայաստանից Թուրքիա ընդհանուր արտահանման 28 և 47 տոկոսը հանդիսացել է ալյումինի ոչ լիարժեք մշակված հումքը (կիսաֆաբրիկատը):

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Սարքավորումներ, ատոմային ռեակտորներ, կաթսաներ» և «Երկաթից և պողպատից արտադրանք» արտահանման հոդվածների փաստացի տեսականին, որոնք ևս դիտարկվող ժամանակաշրջանում դեպի Թուրքիա արտահանման մեջ զգալի տեսակարար կշիռ են կազմել: Արդյո՞ք դրանք հանդիսացել են Հայաստանում արտադրված վերջնական սարքավորում և արտադրանք, թե՞, այնուամենայնիվ, եղել են նախկին ԽՍՀՄ-ից ժառանգություն մնացած և որպես մետաղի ջարդոն իրացված ապրանքներ:

Դիտարկվող երեք տարիներին, ընդհանուր վերցրած, Թուրքիա է արտահանվել 17 խումբ ապրանք, որոնցից 6-ի մասով՝ միջին տարեկան ընդամենը 333 դոլարի ապրանք: Արտահանման շուրջ 95%-ը կազմում են ընդամենը 3 խումբ ապրանքներ:

Բերված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանձինս Թուրքիայի մենք ունենք «ծանրաքաշ» առևտրային գործընկեր, սակայն այս չհմաստավորված կամ տնտեսական շահի մակրոմակարդակով անուշադրության մատնված գործընկերությունն աշխատում է միակողմանի՝ ի օգուտ Թուրքիայի Հանրապետության:

Եզրափակում

Ընդհանուր առմամբ թեթև արդյունաբերության, դրանում կարի և տրիկոտաժի, ինչպես նաև կաշվի ապրանքների արտադրության և երկու երկրների միջև, եթե տեղին է ասել, աշխատանքի և հումքի բաժանման խնդիրներն ու ավելացված արժեքի ստեղծման հարցերը բոլորովին այլ ուսումնասիրության թեմա են հանդիսանում: Միաժամանակ ցանկանում ենք նշել, որ համապատասխան բնագավառների մասնագետները, գործարարներն ու ոչ միայն նրանք կարող են փաստել, թե այս, ինչպես նաև թվարկված այլ ապրանքատեսակների արտադրության և միջազգային մրցունակության արժանանալու ինչ պատմություն և ինչպիսի բաց թողնված հնարավորություններ է ունեցել Հայաստանը. այդ հնարավորություններն այսօր էլ դեռ սպառված չեն: Օրինակ, նախորդ տարիներին արձանագրված շինարարության ճյուղի աննախադեպ աճը բարենպաստ պայմաններ առաջ բերեց ոլորտը սպասարկող ճյուղերի ընդլայնման համար (շինանյութերի արտադրություն, քիմիական արդյունաբերության որոշ ապրանքների արտադրություն[3]), սակայն, ինչպես ցույց է տալիս համապատասխան ժամանակաշրջանների առևտրային հաշվեկշռի վերլուծությունը, նշված ժամանակաշրջանում տնտեսության անկառավարելիությունը (կարգավորման ու նպատակադրումների առումով) հանգեցրեց այն բանին, որ շինարարության «բումից» առավել օգտվեցին ներմուծող ընկերությունները, քան տեղական արտադրողները:

Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների, 1990-ականների վերջերին և 2000-ականների սկզբներին Հայաստանի թեթև արդյունաբերության ճյուղի[3] ապրանքների արտահանումը կազմել է 15-20 մլն. դոլար կամ արտահանման 5-7%-ը: Կարելի է ասել, որ այս ճյուղի արտահանվող ապրանքների բացարձակ ծավալները որոշակիորեն կայուն աճել են՝ 2008-ին կազմելով 44,7 մլն. կամ ընդհանուր արտահանման 4,2%-ը: 2009-ին այս ցուցանիշները եղել են 17,1 մլն. և 2,4%:

Նույն ժամանակաշրջանի սկզբում ճյուղի ներմուծումը եղել է մոտ 39 մլն. դոլար կամ ընդհանուր ներմուծման 4,3%-ը, իսկ 2008-ին այն արդեն եղել է ավելի քան 192 մլն. (ընդհանուր ներմուծման 4,3%-ը), իսկ 2009-ին նվազել մինչև 122 մլն. (ներմուծման 3,7%-ը):

Ճգնաժամի անդրադարձից ելնելով, եթե չհաշվենք 2009-ը, ապա կարելի է արձանագրել, որ անցած գրեթե տասնամյա ժամանակահատվածում թեթև արդյունաբերության ճյուղի արտահանումն ավելացել է 2-3 անգամ, իսկ ներմուծումը շուրջ 5 անգամ՝ արտահանման ծավալները գերազանցելով մոտ 5 անգամ: Ելնելով վերը նշվածից կարելի է կրկին փաստել, որ այս բնագավառում Հայաստանն իսկապես ունեցել է և հիմա էլ ունի որոշակի ներուժ (մրցունակություն): Այդուհանդերձ տեսնենք, թե այս ճյուղի մասով ինչ պատկեր ունենք Թուրքիայի հետ արտաքին առևտրի մասով: Թեթև արդյունաբերության ճյուղի արտադրանքի ներմուծման մեջ 2007-ին թուրքական ապրանքի տեսակարար կշիռը եղել է 14,7, 2008-ին՝ 16,9, իսկ 2009-ին՝ արդեն 22,7%: Նույն ժամանակահատվածում նաև Թուրքիայի արտահանման կառուցվածքում աճել է Հայաս-

3. Այս ճյուղի հասակ բնորոշում այսօր չունենք, թեև նաև վերջինիս ոչ հզոր լինելու պատճառով: Սույն հոդվածում օգտագործվող հաշվարկների համար «թեթև արդյունաբերության ճյուղ» հասկացության մեջ ներառվել է հետևյալ ապրանքախմբերի մասով համապատասխան ցուցանիշների ամբողջությունը. տրիկոտաժ և մանածագործական այլ իրեր, կոշկեղեն, հովհարներ, գլխարկ, կաշի և դրանից իրեր:

տան եկող այս ճյուղի ապրանքների տեսակարար կշիռը՝ 0,05-ից հասնելով 0,13%-ի: Ներկայումս ներմուծվող թուրքական ապրանքների մեջ այս ճյուղի բաժինը կազմում է 12%, 2007-ի 7%-ի փոխարեն:

Եզրափակելով ցանկանում ենք թվարկել այն հիմնական հարցադրումները, որոնք թերևս պետք է առաջանային Հայաստանի առևտրային հաշվեկշռի թուրքական բաժնի հետ ծանոթանալիս.

ո՞րն է ներկա և առաջիկա տարիների Հայաստանի տնտեսության տեսլականը,

ի՞նչ ենք հասկանում ՀՀ տնտեսական շահ ասելով[4],

ո՞ր դեպքում ենք համարում, որ երկրի տնտեսության այս կամ այն ճյուղը վտանգված է,

ինչպե՞ս ենք պատկերացնում մեր տնտեսության «արտահանման կողմնորոշման ընդլայնումը»[5],

ի՞նչ քայլերով ենք պատրաստվում իրագործել «բարձր ավելացված արժեք ձևավորող... կայուն զարգացող ինդուստրիաների ձևավորումը»[6]:

Մինչ վերը նշված հարցերին պատասխաններ գտնելը, արդյո՞ք Թուրքիայի քաղաքացի զբոսաշրջիկներն են կոմպենսացնելու այդ երկրի հետ առևտրային հաշվեկշռի 176,4 մլն. դոլարի բացը (դեֆիցիտը):

4. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, 1.2 կետի «գ» ենթակետ, 2.1 կետ:
5. ՀՀ կառավարության զեկույցը սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններին մասին, էջ 1, www.minfin.am:
6. Նույն տեղը, էջ 4:

«Դրօշակի»

հարցերին պատասխանում է

ԼՂՀ վարչապետ

Արա Հարությունյանը

«Դրօշակ» - Վերջերս Լիբանանի «Արցախ Ռութս Ինվեսթմենթ» (ARI) կազմակերպության հրավերով Ձեր գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով Բեյրութում էր: Ինչո՞վ են Ձեր տպավորություններն այդ այցից:

Ա. Հ. - Լիբանանից վերադարձել եմ մեծ տպավորություններով եւ նոր մտահոգացումներով: Զարգացած գյուղատնտեսություն ունեցող երկրում ունեցած հանդիպումները համոզմունք են ներշնչել, որ ճիշտ աշխատելու դեպքում հնարավոր է այդ ճյուղը զարգացնել նաեւ Արցախում, մանավանդ, որ մեր երկրամասը ագրարային է, եւ նպաստավոր պայմաններ ստեղծելով՝ պետությունը աջակցում է հողօգտագործողներին: Այցի ընթացքում հանդիպումներ ենք ունեցել լիբանանահայ համայնքի եւ գործարարների հետ ու ձեռք բերել մի շարք պայմանավորվածություններ՝ Արցախում գյուղատնտեսությանը, ինչպես նաեւ վերաբնակեցմանը նպաստող ծրագրերը շարունակելու եւ ընդլայնելու ուղղությամբ:

«Դրօշակ» - Լիբանանահայ համայնքի եւ գործարարների հետ հանդիպմանը ի՞նչ որոշակի առաջարկություններ են հնչեցվել առաջա համագործակցության շուրջ եւ այցի ընթացքում ի՞նչ ձեռքբերումներ եք ունեցել:

Ա. Հ. - Լիբանանահայ գործարարների հետ ունեցած հանդիպման ընթացքում շահագրգիռ քննարկումներ են ծավալվել Արցախում գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ԱՐԻ-ի ծրագրի շարունակման շուրջ: Ցածր տոկոսադրույքով լիբանանահայ ներդրողների կողմից քաշաթաղցիներին տրամադրվող նյութական փոխատվություններն ուղղվում են անասնապահության զարգացմանը: Ձեռք է բերվել Շահումյանի շրջանը նույնպես ծրագրում ընդգրկելու պայմանավորվածություն: Նշեմ, որ ընկերության կողմից արվող ներդրումների ծավալները նախկին՝ 300 հազար ԱՄՆ դոլար գումարից զգալիորեն աճել են: Վերջին այցի ժամանակ մոտ 2 մլն. ԱՄՆ դոլարի չափ խոստումներ են եղել: Արցախում գյուղատնտեսական ներդրումների ծրագիրը նախաձեռնել են լիբանանահայ գործարարները, եւ այդ աշխատանքները, իմ կարծիքով, պետք է շարունակվեն հայկական այլ գաղութներում՝ մինչեւ որ հնարավոր լինի այդ ծրագրերի մեջ ներգրավել նաեւ օտար գործարարների եւ վերածվել ներդրողների միջազգային միության:

«Դրօշակ» - Նկատելի է, որ իրականացվող ծրագրերը, հիմնականում, ուղղված են Արցախի վերաբնակեցված շրջանների զարգացմանը. ինչպիսի՞ն կլինի այդ գործընթացի շարունակականությունը եւ արդյո՞ք այդ ծրագրերում կընդգրկվեն Արցախի մյուս շրջանները:

Ա. Հ. - Այո, ծրագիրը մեկնարկել է Քաշաթաղի շրջանում, սակայն ԱՐԻ-ի ծրագրից արդեն կարող են օգտվել նաեւ շահումյանցիները: Նախնական փուլով այսքանը. հետագայում, սակայն, չի բացառվում նաեւ հանրապետության մյուս շրջանների ընդգրկումը ծրագրում:

«Դրօշակ» - Նկատի ունենալով վերջերս ԵԱՀԿ Մինսկի խմբի հրապարակած զեկույցը, որի մեջ հորդոր կա Արցախի ազատագրված տարածքներում ձեռնպահ մնալ գործունեություն ծավալելուց, ինչպիսի՞ն է լինելու Արցախի կառավարության մոտեցումը այս խնդրի շուրջ:

Ա. Հ. - Արցախի իշխանությունները ազատագրված տարածքներում շարունակելու են իրականացնել նախատեսված ծրագրերը՝ ենթակառուցվածքների վերականգնման, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման եւ վերաբնակեցման ուղղությամբ: Այդ շրջաններում բնակվում են ԼՂՀ քաղաքացիներ, ովքեր ունեն նորմալ պայմաններում ապրելու իրավունք, իսկ պետությունը պարտավոր է ապահովել գոնե մինիմալ պայմաններ: Մեր նպատակների իրագործման ճանապարհին ես որեւէ խոչընդոտ չեմ տեսնում:

«Դրօշակ» - Բազմիցս նշվել է, որ Արցախի վերաբնակեցումը համահայկական խնդիր է. ի՞նչ ակնկալիքներ ունի Արցախի կառավարությունը Սփյուռքի հայ համայնքներից եւ հատկապես ՀՅ Դաշնակցությունից՝ որպես համահայկական կառույց, եւ որքանո՞վ են դրանք իրականանալի:

Ա. Հ. - Վերջին տարիներին վերաբնակեցման ոլորտում կատարված փոփոխությունները արձանագրում են թեկուզեւ դանդաղ, սակայն դրական տեղաշարժեր: Օրինակ, վերջին երեք տարվա ընթացքում հանրապետություն է տեղափոխվել ավելի քան 440 ընտանիք, որից 130-ը՝ միայն անցած տարի: Իսկ անցած 7 ամիսներին միայն Քաշաթաղի շրջանում վերաբնակվել է մոտ 300 ընտանիք, շարունակվելու են հայրենադարձության ծրագրերը: Միայն պետական բյուջեի միջոցները բավարար չեն կարեւոր նշանակության այս ոլորտի խնդիրների լուծման համար, մենք ակնկալում ենք Սփյուռքի հայ համայնքների աջակցությունը: Առավել ակտիվ մասնակցություն եմ ակնկալում ՀՅ Դաշնակցությունից՝ որպես համահայկական խոշոր կառույց:

«Դրօշակ» - Համահայկական ներուժի օգտագործման ուղղությամբ Արցախի իշխանությունները ի՞նչ հաղորդակցություն են որդեգրել եւ Արցախում ինչպե՞ս են համակարգվում Սփյուռքի հետ հարաբերությունները:

Ա. Հ. - Նախ պետք է նշեմ, որ Արցախի Հանրապետության անկախացման ճանապարհին անգնահատելի է համահայկական ներդրումը, որպես սեփական հայրենիքի անկախացմանը միտված նվիրում: Արցախի իշխանությունները մշտապես կարեւորում են համահայկական ներուժի օգտագործումը Արցախի զարգացման գործում: Մենք հնարավորության սահմաններում ստեղծում ենք բարենպաստ պայմաններ հայրենանվեր ներդրումների համար, որոնք ուղղված են Արցախի տնտեսության զարգացմանը, ազատագրված տարածքների վերաբնակեցմանը: Մշտապես պատրաստ ենք սերտ համագործակցել համահայկական բոլոր կազմակերպությունների հետ: Մեր գլխավոր նպատակն է Արցախում ստեղծել արդյունավետ ու բարենպաստ միջավայր, որը կհամընկնի Սփյուռքում ապրող մեր հայրենակիցների ցանկությանը՝ օգնելու, մասնակիցը լինելու Արցախի զարգացմանը:

Օգտվելով առիթից, կոչ եմ անում մեր բոլոր հայրենակիցներին ավելի հաճախ այցելել Արցախ, տեղում ծանոթանալ իրականացվող ծրագրերին:

«Դրօշակ» - Շնորհակալություն:

Այն հուզումնալից օրերին

1991 թ. սեպտեմբերի 2-ին տեղի ունեցավ ԼՂ մարզային խորհրդի 20-րդ գումարման 11-րդ նստաշրջանը Շահումյանի շրջանային խորհրդի պատգամավորների մասնակցությամբ: Այդ նստաշրջանում որոշվեց ԼՂԻՄ-ը և Շահումյանի շրջանը հայտարարել հանրապետություն: Նույն թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե, իսկ դեկտեմբերի 28-ին՝ Գերագույն խորհրդի ընտրություններ: Նորընտիր Գերագույն խորհուրդը հունվարի 8-ին ԳԽ-ի նախագահ ընտրեց 33-ամյա պատմաբան Արթուր Ասլանի Մկրտչյանին, որի կյանքը նույն թվականի ապրիլի 13-ին կտրվեց ողբերգական մահով: 1992 թ. մայիսի 9-ին Շուշիի ազատագրումից և Հայաստանի հետ ցամաքային ճանապարհ բացվելուց հետո հունիսի 2-6-ը տեղի է ունենում ԼՂՀ ԳԽ երկրորդ նստաշրջանը, որի օրակարգում ընդգրկված 22 հարցերից ամենահրատապը ԼՂՀ ԳԽ նախագահի ընտրության հարցն էր: Հայաստանի Հանրապետությունից Լեռնային Ղարաբաղ ժամանած պատվիրակությունը ՀՀ ԱԺ նախագահ Բ. Արարքցյանի գլխավորությամբ խնդիր ուներ ԼՂՀ ԳԽ նախագահ ընտրել հիշականի: Սակայն դա ձախողվեց: Նստաշրջանում ընդարձակ ելույթով հանդես է գալիս ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը: Նրա ելույթում ամփոփված էր ԼՂՀ ԳԽ 5 ամսվա գործունեությունը: Զեկույցը կարևոր նշանակություն ունի տվյալ ժամանակաշրջանում Արցախում տեղի ունեցած իրադարձությունները ճիշտ հասկանալու համար: Գ. Պետրոսյանի ելույթը ներկայացնում ենք առանց որևէ միջամտության:

Հրանտ Աբրահամյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գեորգի Պետրոսյանի ելույթը ԼՂՀ ԳԽ նստաշրջանում 1992 թ. հունիսի 2-ին

Երկարատև ընդմիջումից հետո մենք նորից հնարավորություն ենք ստացել հավաքվելու, որպեսզի քննարկենք մեր ժողովրդի համար ճակատագրական խնդիրներ, գնահատական տանք անցած հինգ ամիսների մեր պայքարին և կարևոր որոշումներ ընդունենք:

Ներկա ժամանակաշրջանը նշանակալից է մեր ժողովրդի ազատագրական պայքարի դրական տեղաշարժերով: Մենք նստաշրջան ենք եկել շատ հաղթանակներ տանելուց և բազմաթիվ կարևոր խնդիրներ լուծելուց հետո: Եվ, անշուշտ, մեր ժողովրդի տիտանական աշխատանքի լուսապսակը դարձավ Ադրբեջանի ղեկավարության կողմից Արցախը շրջափակման օղակում խեղդելու քառամյա քաղաքականության ձախողումը: Մեր ժողովուրդը ցույց տվեց, որ թույլ չի տա ոչ մի ոտնձգություն իր հողի, իր ազատության նկատմամբ, և ոչ ոքի թույլ չի տա իր հետ խոսել ուժի դիրքերից: Հանրապետության ներկա ղեկավարության ընտրություններից հետո անցած հինգ ամիսների ընթացքում ԼՂՀ ողջ տարածքում ապաշրջափակվել են ներքին բոլոր ավտոճանապարհները, Ստեփանակերտի օդանավակայանը, վնասազերծվել են ադրբեջանական բանակի ավելի քան քառասուն ռազմակայաններ, ազատագրված է Շուշին և, վերջապես, դեպի Հայաստան բացվել է մարդասիրական միջանցք: Նույն այդ ժամանակամիջոցում մեզ հաջողվել է ծանրակշիռ հաջողությունների հասնել հանրապետության ինքնապաշտպանական ուժերի կազ-

մակերպման և հագեցման ուղղությամբ: Որոշակի հաջողություններ ենք ձեռք բերել մեր ջոկատների ղեկավարման, կենտրոնացման և մարտական ոգին բարձրացնելու հարցերում: Տարածաշրջանում այսօր մենք ոչ միայն քաղաքական, այլ նաև որոշակի ռազմական ուժ ենք ներկայացնում:

Լայնածավալ ռազմական գործողությունները, մեր քաղաքների և գյուղերի մշտական ռմբակոծությունները, հանրապետության ամբողջական շրջափակումը Արցախի ժողովրդին մեծ զրկանքների առաջ կանգնեցրին: Հազարավոր մարդիկ զրկվել են տնից, կայքից, մշտական բնակավայրից, ուտելիքից: Հանրապետության սահմանային շրջաններից, որտեղ ամեն ինչ ավերվել ու հրդեհվել է, առաջացել է ներքին փախստականների մի մեծ թիվ: Ստեփանակերտից հեռացել է բնակչության մեծ մասը:

Այս պայմաններում, հանրապետության ղեկավարությունը մշտական աշխատանքներ է իրականացրել մարդկանց տեղավորելու, նրանց ծայրահեղ անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու ուղղությամբ: Ծանրագույն և վտանգավոր պայմաններում չի դադարել Հայաստանի և ԼՂՀ-ի օդային կապը, ինչը հնարավոր է դարձրել մարդասիրական օգնության կազմակերպումը, ինչ-որ չափով թեթևացնելով տուժած մարդկանց վիճակը:

Անցած ողջ ծանր ժամանակաշրջանում Գերագույն խորհրդի ղեկավարությունը ոչ մի օր չի դադարեցրել ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև քաղաքական հարաբերությունների կարգավորման դիվանագիտական գործողությունները: Այդ աշխատանքի արդյունքը մեր ժողովրդի հիմնահարցի միջազգային ճանաչման փաստն է: Այս գործում մեծ է Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի ներդրումը: Նրա արտաքին քաղաքական ակտիվ գործունեությունը համաշխարհային դիվանագիտության մեջ Լեռնային Ղարաբաղի շուրջ փառքի պսակ է ստեղծել (այդ մասին գրում են շատ թերթեր):

Առավել սերտ աշխատանք է տարվել հարևան Իրանի ներկայացուցիչների հետ, որի ղեկավարությունը մեր տարածաշրջանում ձգտում է եռանդուն միջնորդական գործունեության: Չնայած Ադրբեջանի կողմից հարուցվող խոչընդոտներին, մենք հնարավորություն ունեցանք Իրանի ներկայացուցիչներին ընդունելու ուղղակի Ստեփանակերտում: Հանդիպումներ կայացան և Հայաստանում:



Գեորգի Պետրոսյան

Իր միջնորդական ծառայություններն առաջարկեց նաև Ռուսաստանը, որի արտաքին գործոց նախարար Կոզիրևը ևս այցելեց Ստեփանակերտ: Բայց թերևս առավել բովանդակալից կապեր և բանակցություններ մենք ունեցել ենք ԵԱՀԽ-ի ներկայացուցիչների հետ: Միջազգային այդ կազմակերպությունը ստանձնել է ղարաբաղյան հիմնահարցով միջազգային համաժողովի կազմակերպման և անցկացման պատասխանատվությունը: Անվտանգության երաշխիքի բացակայության պատճառով այդ կազմակերպության ներկայացուցիչները չկարողացան այցելել Ստեփանակերտ, ուստի և նրանց հետ բանակցությունները կայացան Հայաստանի տարածքում: Այդ բանակցությունների որոշակի և նշանակալից հաջողությունը ճանաչումն էր այն բանի, որ առանց Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների ցանկացած բանակցություն հեռանկար չի ունենա: Այդ հանգամանքը հատկապես կարևոր է, քանի որ մինչև այժմ շահագրգիռ բոլոր կողմերը ԼՂՀ-ն ինքնուրույն քաղաքական ուժ չէին համարում: Գլխավոր պայմանին՝ ցանկացած բանակցության որպես իրավահավասար կողմ ԼՂՀ-ի մասնակցությանը հասնելու նպատակով ԵԱՀԽ-ի ներկայացուցիչների հետ բանակցությունները շարունակվում են: Ցավոք, այդ կարևոր հարցում փոխըմբռնում տակավին ձեռք չի բերվել:

ԼՂՀ-ի նկատմամբ որոշակի հետաքրքրություն է սկսել դրսևորել նաև ՄԱԿ-ը, որի ներկայացու-

ցիչները անցած շաբաթվա մեջ այցելեցին Ստեփանակերտ: Մենք հուսով ենք, որ դա միջազգային հեղինակավոր այդ կազմակերպության հետ արգասաբեր համագործակցության սկիզբն է միայն:

Մեր հանրապետության քաղաքական կյանքի նշանակալից փաստը դարձավ Հայաստանում ԼՂՀ-ի մշտական ներկայացուցչի պաշտոն հիմնելը: Այժմ մենք կարող ենք ունենալ մեր պաշտոնական ձայնը, որը կպաշտպանի ԼՂՀ-ի շահերը և Հայաստանի հասարակայնությանը թույլ կտա առավել հանգամանորեն հետևել ԼՂ Հանրապետությունում տեղի ունեցող գործընթացներին: Հուսով ենք, որ նույնպիսի ներկայացուցիչներ մենք կունենանք նաև մյուս երկրներում: Դա մեզ կօգնի ևս մեկ քայլ կատարելու մեր միջազգային ճանաչման հարցում:

Ադրբեջանի ղեկավարության հետ մեր պաշտոնական հարաբերություններում, այդ հանրապետությունում քաղաքական անկայուն իրավիճակի պատճառով, օբյեկտիվ դժվարություններ գոյություն ունեն: Ցավոք, այնտեղ դեռևս իրենց չեն դրսևորել գործարար երկխոսության պատրաստ ուժերը: Ընդհակառակը, մենք հարկադրված ենք նշել, որ այժմ իշխանության գլուխ են գալիս ազգայնամոլ ուժերը, ինչը կարող է էլ ավելի բարդացնել մեր հարաբերությունները: Միաժամանակ ասեմ, որ մենք պաշտպանում ենք պատանդների փոխանակման, կրակի դադարեցման և ընթացիկ հարցերով Ադրբեջանի ղեկավարության հետ հեռախոսային առանձին շփումները: Բայց մեր դիրքորոշումը միշտ եղել է և մնում է նույնը՝ մենք Ադրբեջանի հետ կարող ենք խոսել միայն հավասարի իրավունքով: ԼՂՀ-ն նույնպիսի ինքնիշխան հանրապետություն է, ինչպես Ադրբեջանը:

Հատուկ նշանակություն են ունեցել և ունեն Հայաստանի հետ հարաբերությունները: Այստեղ, կարծում եմ, ավելորդ է խոսել, թե որքան կարևոր է մեր հանրապետությունների ղեկավարությունների փոխըմբռնումը՝ հաշվի առնելով հայ ժողովրդի ճակատագրում նրանց քաղաքական ուղեգծերի փոխադարձ նշանակության գործոնը:

Ռազմական և արտաքին քաղաքական ոլորտի հաջողությունները մեկ րոպե իսկ մոռացության չեն տալիս հանրապետությունում ստեղծված ծայրահեղ ծանր կացությունը: Տնտեսությունը ջլատված է: Վառելիքի և էլեկտրաէներգիայի բացակայությունը մեզ զրկել է տնտեսական որևէ գործունեություն իրականացնելու հնարավորությունից: Գարնանացանի անցկացման հնարավորություն չի եղել: Կերերի բացակայությունը և անասունների մեծաթիվ հափշտակումները հրսկայական վնաս են հասցրել անասնապահությանը: Լիակատար շրջափակման և ռմբակոծությունների պայմաններում հարկադրական պառապուրդի են մատնվել արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները և շինարարական օբյեկտները: Հանրապետության փոխադրական շարժակազմը կազմալուծված է: Ապրանքաղրամային հարաբերություններ գործնականում գոյություն չունեն: Այս ամենը հանգեցրել է մարդկանց նյութական ծանր կացությանը, իսկ առանձին վայրերում՝ ժողովրդին հասցրել է սովի եզրին:

Նույն այդ իրավիճակում, գործնականում բնականոն պայմաններ չեն եղել երեխաների ուսուց-



ման և դաստիարակության համար: Դպրոցական բոլոր ծրագրերն ու բուհական դասընթացները ձախողվել են, մանկապարտեզները փակվել են:

Լուրջ հիմնահարցի են վերածվում քաղաքացիական բնակչության ինքնապաշտպանության ջոկատների հարաբերությունները: Կյանքի խիստ ռազմականացումը մինչ այդ գոյություն չունեցող հիմնահարցեր է ծնել՝ ծանր դրության մեջ են մարտիկների ընտանիքները, մանավանդ սպանվածների և վիրավորների ընտանիքները:

Շրջափակման ճեղքումը նոր լուրջ հարցեր առաջադրեց: ԼՂՀ-ում և Հայաստանում ապրանքների գների խիստ տարբերությունը սպառնում է տնտեսական հակասությունների լուրջ սրմամբ և ԼՂՀ-ի սահմաններից բնակիչների արտահոսքի հնարավորությամբ:

Մատնանշված ընկերային-տնտեսական իրադրությունը բարդանում է Գերագույն խորհրդի ներքաղաքական խրթին իրավիճակով: Գերագույն խորհրդի բնականոն օրինաստեղծ աշխատանքի անհնարինությունը, գործադիր իշխանության մարմինների համալրված չլինելը, իրավապահ մարմինների անկազմակերպվածությունը, օրենքների բացակայությունը և գլխավորապես ինքնապաշտպանության ուժերի կառուցվածքի իրավական անորոշությունը սպառնում են անկառավարելի դարձնել մեր կյանքը: Այս պայմաններում տագնապ է հարուցում նախկին համայնավարական վարչահրամայական համակարգի առանձին կաշառված խմբավորումների և առավել հետադիմական տարրերի քաղաքական ակտիվությունը: Մյուս կողմից, նկատելի է ժողովրդավարական ուժերի քաղաքական ակտիվությունը: ԳԽ նախագահ Արթուր Մկրտչյանի ողբերգական մահը էլ ավելի բարդացրեց քաղաքական իրավիճակը հանրապետությունում:

Ահա այսպիսի բարդ ներքին և արտաքին քաղաքական իրավիճակում մենք այսօր անցկացնում ենք մեր նստաշրջանը:

Մեր առջև ծառացել է պետություն կառուցելու բարդ խնդիրը, որ ենթադրում է օրինաստեղծ լայն գործունեություն: Այն ամենը, ինչ պարտավոր ենք անել, այս հողում առաջին անգամ է արվում: Եվ այդ իմաստով մենք պետք է սովորենք մյուս ժողովուրդներից: Առաջին հերթին անհրաժեշտ է ընդունել օրենքներ, որոնք թույլ կտան իրավական շրջանակների մեջ դնել ինքնապաշտպանության ուժերի համակարգը, կարգավորել իրավապահ մարմինների գործունեությունը: Մեզ անհրաժեշտ են օրենքներ՝ Գերագույն խորհրդի բնականոն աշխատանքը կազմակերպելու համար, օրենք հողի մասին և այլն: Սրանք այսօրվա դրությամբ գործունեության առավել կարևոր բնագավառներն են: Պակաս կարևոր չէ նաև ինքնապաշտպանության ուժերի ամրապնդումն ու զարգացումը: Մենք զինակոչի և մասնագիտական ջոկատների կազմակերպման հիման վրա պետք է անցնենք գործի նկատմամբ որակապես նոր մոտեցման:

Նոր հնչեղություն պետք է ստանա արտաքին քաղաքական գործունեությունը: Այն պետք է ուղղված լինի մեր ինքնիշխան հանրապետության միջազգային ճանաչմանը:

Մեր ժողովրդի լուրջ և դժվարին խնդիրն է ժողովրդական տնտեսության վերականգնումը և տնտեսական նոր կապերի հաստատումը: Մենք պետք է ելնենք տնտեսավարման համաշխարհային փորձից, շուկայական տնտեսությունից և հողի նկատմամբ մասնավոր սեփականության հաստատումից: Հողը հարկավոր է վերադարձնել ժողովրդին:

Սրանք են մեր հիմնահարցերը, և շատ բան կախված է հենց նրանցից, ովքեր այժմ գտնվում են այս դահլիճում:

f. Շուշի, Ն.Դումանի 2

f. Ստեփանակերտ, Հ.Թումանյանի 111ա

«Հայաստան և Ադրբեջան. կանխելով պատերազմը»

Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցը

Կարեն Վերանյան
«Նորավանք» հիմնադրամ

2011 թ. փետրվարի 8-ին լույս տեսավ հեղինակավոր Միջազգային ճգնաժամային խմբի հերթական զեկույցը, որն այս անգամ նվիրված էր ղարաբաղյան հակամարտությունում տիրող ներկայիս իրադրությանն ու հնարավոր զարգացումներին:

Ստորև կփորձենք ներկայացնել Միջազգային ճգնաժամային խմբի կողմից պատրաստված զեկույցում տեղ գտած հիմնական փորձագիտական գնահատականներն ու կանխատեսումները, առանձնացնել փորձագետների կողմից ներկայացված գլխավոր խորհրդատվական միջոցառումները:

Միջազգային ճգնաժամային խմբի ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ զեկույցում հավանական է համարվում Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմական գործողությունների վերսկսումը: Փորձագիտական նման գնահատականի համար հիմք են ընդունվել 2010 թվականի ընթացքում հակամարտության գոտում տիրող իրադրության մոնիթորինգային աշխատանքները: Զեկույցը փաստում է, որ 2010 թ. ընթացքում ավելացել են բախումները սահմանի տարբեր հատվածներում, երկու կողմերն էլ նախորդ տարվա ընթացքում շատացրել են ռազմական ծախսերը, իսկ հակամարտող կողմերի միջև ընթացող բանակցություններում նկատելի է որոշակի դադար ու սառեցում: Հատկապես խոսվում է ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ տարվող բանակցություններում 2010 թվականին ԵԱՀԿ Մինսկի խմբի անարդյունավետ գործունեության մասին:

Հնարավոր ռազմական գործողություններից խուսափելու և հարցին խաղաղ լուծում տալու համար Միջազգային ճգնաժամային խումբը խորհուրդ է տալիս հակամարտող կողմերին ընդունել հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքները և ձեռնարկել փոխվստահության վերականգնմանն ուղղված կառուցողական քայլեր: Զեկույցում մասնավորապես նշված է. «Սպառազինությունների մրցավազքը, շփման գծում հաճախակի դարձած բախումները, ռազմական հռետորաբանությունը և խաղաղ բանակցությունների փաստացի խափանումը մեծացնում են Հայաստանի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի շուրջ պատերազմի վերսկսման հավանա-

կանությունը: Պատերազմի կանխումը հրատապ է. երկու կողմերի աճող ռազմական ներուժի պարագայում նոր զինված հակամարտությունը Հարավային Կովկասում շատ ավելի աղետալի կլինի, քան 1992-94 թթ. պատերազմը, որն ավարտվեց անկայուն զինադադարով»:

Միջազգային ճգնաժամային խմբի փորձագետների գնահատականներով, հակամարտող որևէ կողմ չի կարող հասնել հետ և արագ հաղթանակի, իսկ ռազմաճակատին մոտ կենսական նավթատար խողովակաշարները, ինչպես նաև տարածաշրջանի կայունության համար առանցքային ռուս-թուրքական համագործակցությունը կարող են հայտնվել սպառնալիքի տակ:

«Հայաստան և Ադրբեջան. կանխելով պատերազմը» զեկույցն արձանագրում է, որ վերջին տարում հակամարտության գոտում իրավիճակն էապես վատթարացել է, և չնայած կողմերից ոչ մեկը չի ծրագրում վերսկսել լայնածավալ ռազմական գործողություններ, սակայն սահմանի տարբեր հատվածներում ռազմական բախումներն ու փոխհրաձգությունների ավելացումը, որոնց հետևանքով արդեն երեսուն մարդ զոհվել է, հետզհետ կարող են դուրս գալ վերահսկողությունից:

Զեկույցում կարևորվում է հակամարտող կողմերի միջև կառուցողական փոխվստահության մթնոլորտի ձևավորումը սահմանային գծում՝ ընդհուպ մինչև դիպուկահարների հեռացումը շփման գծից:

Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցում խոսվում է, որ հակամարտության գոտում լարվածության թուլացման նպատակով Հայաստանը չպետք է իր կանոնավոր բանակի նորակոչիկներին ուղարկի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի իշխանությունները պետք է դադարեցնեն այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք հակամարտության ներկայիս «սատուս քվոն» դարձնում են առավել անտանելի Ադրբեջանի համար: Մասնավորապես նշվում է հակամարտության ներկայիս սատուս քվոն փոխելու անհրաժեշտության մասին, որը, զեկույցի համաձայն, «խորապես վնասում է Ադրբեջանին. 586 հազ. ադրբեջանցիներ տեղահանված են Լեռնային Ղարաբաղից և հարակից տարածքներից, իսկ երկրի շուրջ 14 տոկոսն օկուպացված է»: Հակառակ դեպքում, նշված է զեկույցում, Ադրբեջանի հասարակական կարծիքը և երկրի իշխանությունները արդարացված կհամարեն Բաքվի կողմից կուտակվող ռազմական ներուժի կիրառումը:

Զեկույցում նաև տվյալներ են պարունակվում Ադրբեջանի ռազմական բյուջեի մեծացման վերաբերյալ. վերլուծաբանների հաղորդած վիճակագրության համաձայն, Ադրբեջանի ռազմական բյուջեն 2010-2011 թթ. ընկած ժամանակահատվածում կավելանա գրեթե 45 տոկոսով և կկազմի երկրի ընդհանուր բյուջեի ($15,9 մլրդ.) $3,1 միլիարդը:

Ճգնաժամային խմբի փորձագետները հնարավոր են համարում, որ սպառազինությունների ձեռք բերումը, ռազմական հոետորաբանությունը և շփման գծի երկայնքով հարձակողական գործողությունները բանակցությունների սեղանի շուրջ Երևանին ճնշելու Բաքվի մարտավարությունն են, բայց հնարավոր է, որ այդ ամենը, ըստ վերլուծաբանների, նաև ուժի կիրառման նախապատրաստություն է՝ նախքան նավթային եկամուտների կանխատեսվող անկումը այս տասնամյակի կեսերին: Նմանապես հնարավոր է, որ Հայաստանն ու Ղարաբաղը, որոնք, ըստ փաստաթղթի հեղինակների, տեղյակ են այդ ժամանակագծի մասին, որոշեն կանխարգելիչ հարված հասցնել:

Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցում տեղ գտած փորձագիտական գնահատականներում անդրադարձներ են ներկայացվում նաև ղարաբաղյան հակամարտության համատեքստում հակամարտող երկրների ներքաղաքական իրադրության վերաբերյալ: Մասնավորապես խոսվում է Ադրբեջանում երկրի նախագահ Իլհամ Ալիևի նկատմամբ ներկայիս ու սպասվող հասարակական-քաղաքական ճնշումների մասին: Զեկույցում նշվում է, որ Ալիևը մտադիր է 2013 թ. երրորդ անգամ նախագահել երկիրը, հետևաբար և կգերադասի հասնել էական արդյունքների, ինչ-

Central and Eastern Europe	Overall Rank	Overall Score	Regional Rank
Slovenia	11	1.358	1
Czech Republic	12	1.360	2
Hungary	20	1.495	3
Slovakia	21	1.536	4
Poland	29	1.618	5
Croatia	41	1.707	6
Lithuania	42	1.713	7
Romania	45	1.749	8
Estonia	46	1.751	9
Bulgaria	50	1.785	10
Latvia	54	1.827	11
Bosnia and Hercegovina	60	1.873	12
Albania	65	1.925	13
Moldova	66	1.938	14
Macedonia	83	2.048	15
Montenegro	88	2.060	16
Serbia	90	2.071	17
Kazakhstan	95	2.113	18
Ukraine	97	2.115	19
Belarus	105	2.204	20
Uzbekistan	110	2.242	21
Armenia	113	2.266	22
Turkmenistan	117	2.295	23
Azerbaijan	119	2.367	24
Turkey	126	2.420	25
Georgia	142	2.970	26
Russia	143	3.013	27
Average	74	1.993	

պես, օրինակ, ղարաբաղյան հակամարտության հարցում: Զեկույցի համաձայն, Ադրբեջանի հասարակական կարծիքն ասիճանաբար ավելի դեմ է այդ հարցում որևէ փոխզիջման: Մինչդեռ հասարակության փոքր տոկոսն է հակված հավատալու, որ անկայուն «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրադրությունն ավելի շուտ կշարունակվի, քան առաջընթաց կարձանագրվի խաղաղ բանակցություններում:

Մյուս կողմից, ինչպես նկատում են զեկույցի հեղինակները, շատերն են գտնում, որ Ադրբեջանը դժվար թե դիմի ռազմական գործողությունների, ինչը կվտանգի նրա էներգետիկ անվտանգությունն ու կթուլացնի այդ երկրի՝ որպես տրանսպորտային միջանցքի ռազմավարական դիրքը: Սակայն, պետք է նաև նկատի ունենալ, որ Ադրբեջանը 2010 թ. հասել է իր՝ նավթարտադրության վրա հիմնված տնտեսական աճի գագաթնակետին. ավելին, այս տասնամյակի կեսերին երկրի նավթի պաշարների կանխատեսվող սպառման հանգամանքը կարող է դրդել երկրի իշխանություններին այլ միջոցառումների՝ ընդհուպ մինչև ռազմական գործողությունների վերսկսումը:

Զեկույցի համաձայն, միջազգային հանրությունը պետք է ջանքեր գործադրի խոչընդոտելու տարածաշրջանում սպառազինությունների վտանգավոր մրցավազքը: Մասնավորաբար Ռուսաստանը, որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, ինչպես և հակամարտության այլ շահագրգիռ կողմեր, պետք է աջակցեն Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության և ՄԱԿ-ի սպառազինությունների արգելքների կիրառմանը: ԵԱՀԿ-ն, Մինսկի խմբի համանախագահող երկրների լիակատար աջակցությամբ, պետք է խրախուսի կողմերին ընդլայնել վերջինիս դիտորդական առաքելության մանդատը և համաձայնության հանգել դիտորդների թվաքանակի ավելացման հարցում:

Զեկույցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում վերջին տարիներին կողմերի միջև սպառազինությունների ձեռք բերման գործընթացի արագացման հարցերին, որոնք, ըստ զեկույցի փորձագետների, էապես մեծացնում են հակամարտության գոտում լարվածության խորացումն ու պատերազմի վերսկսման հավանականությունը: Փորձագետները անդրադառնում են նաև Ռուսաստանի կողմից Հայաստանին սպառազինությունների նոր մատակարարումներին ու այդ համատեքստում Ադրբեջանի իշխանությունների դժգոհություններին:

Զեկույցում փորձագետները փորձել են ներկայացնել որոշակի կանխատեսումներ ղարաբաղյան հակամարտության գոտում ռազմական գործողությունների վերսկսման դեպքում հնարավոր զարգացումների վերաբերյալ: Այդ գնահատականների համաձայն, ՀՀ բանակի բարոյա-հոգեբանական ու մարտական պատրաստվածությունն ավելի բարձր է, քան Ադրբեջանի ԶՈՒ-ինը, ինչը հաստատում են այլ ռազմական փորձագետներ ու վերլուծաբաններ: Զեկույցի գնահատականներով, պատերազմի վերսկսման պարագայում Ադրբեջանի քաղաքացիները կհայտնվեն առավել խոցելի իրավիճակում, քանի որ ադրբեջանական քաղաքները, գյուղերն ու ներքին տեղահանվածներով նոր վերաբնակեցված վայրերը առավել մոտ են գտնվում ԼՂՀ շփման գծին:

Հետևություններ. հայացք հայաստանյան իրականությունից

Հարկ է նշել, որ Միջազգային ճգնաժամային խմբի կողմից պատրաստված զեկույցի փորձագիտական գնահատականները, այնուհանդերձ, ամբողջությամբ չեն արտացոլում ղարաբաղյան հիմնախնդրի ընդհանուր իրատեսական նկարագիրը: Ավելին, զեկույցի փորձագիտական վերլուծություններում նկատելի է կողմնակալություն և սուբյեկտիվություն, ինչը խորապես խեղաթյուրում է ղարաբաղյան հիմնախնդրի ու դրա կարգավորման ներկայիս գործընթացի բուն էությունը: Հաշվի առնելով այդ հանգամանքները՝ նպատակահարմար ենք համարում, այնուհանդերձ, որոշակի վերապահումներով մոտենալ զեկույցի փորձագիտական գնահատականներին ու արված կանխատեսումներին՝ մի քանի հիմնական շարժառիթներով.

1. Նախ՝ Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցում նշված է. «Հակամարտության գոտում լարվածության թուլացման նպատակով Հայաստանը չպետք է իր կանոնավոր բանակի նորակոչիկներին ուղարկի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն»: Այդ թյուր ենթադրության հերքման համար կարելի է բերել մի շարք փաստարկներ, որոնք ամենևին էլ հաշվի չեն առնվել զեկույցի փորձագիտական գնահատականներում: Խնդիրը նախ և առաջ նրանում է, որ ՀՀ կանոնավոր բանակի նորակոչիկների զինծառայությունը ԼՂՀ-ում ոչ թե հետապնդում է լարվածության պահպանման ու սպառնալիքի ցուցադրման նպատակներ, այլ ելնում է ՀՀ-ի՝ ԼՂՀ-ի ու նրա ժողովրդի անվտանգության ապահովման միակ երաշխա-

Policy Briefing

Europe Briefing N°60
Tbilisi/Baku/Yerevan/Istanbul/Brussels, 8 February 2011

International Crisis Group
WORKING TO PREVENT CONFLICT WORLDWIDE

Armenia and Azerbaijan: Preventing War

վորը հանդիսանալու անհերքելի ճշմարտությունից: Ավելին, հակամարտության գոտում ուժերի նման փոխդասավորվածությունը, Ադրբեջանի ռազմական ծախսերի շեշտակի ավելացման ու տարածաշրջանում ռազմական մրցավազքի արագացման համատեքստում, մինչ օրս հանդիսացել է հակամարտող կողմերի միջև ռազմական հավասարակշռության պահպանման կարևոր նախադրյալներից մեկը:

2. Զեկույցում փորձագետները անդրադառնում են «Լեռնային Ղարաբաղից և հարակից տարածքներից 586 հազ. տեղահանված ադրբեջանցիների» խնդրին, սակայն միևնույն ժամանակ կրկին խոսք անգամ չկա Բաքվի ու սումգայիթյան ջարդերի հետևանքով առաջացած հայ փախստականների ու տեղահանվածների վերաբերյալ: Այդ հանգամանքի անտեսումը և՛ մեկ կարևոր փաստարկ է զեկույցի փորձագիտական գնահատականներին վերապահումներով մոտենալու համար:

3. Զեկույցը փաստում է, որ «2010 թ. ընթացքում ավելացել են բախումները սահմանի տարբեր հատվածներում, երկու կողմերն էլ այդ ժամանակահատվածում շատացրել են ռազմական ծախսերը»: Այս փորձագիտական գնահատականում նույնպես ակնհայտ է անիրատեսությունն ու անփաստարկված վերլուծությունը: Խնդիրը նրանում է, որ ոչ թե երկու կողմերն են ավելացրել ռազմական ծախսերը, այլ Ադրբեջանն է վերջին տարիներին էապես ավելացրել իր ռազմական ծախսերը, որին հետևել է Հայաստանի Հանրապետությունը՝ տարածաշրջանում ռազմական հավասարակշռության պահպանման և հնարավոր ռազմական գործողությունների վերսկսումից խուսափելու նկատառումներով: Նկատենք նաև, որ այս գնահատականի հետ կապված՝ զեկույցի փորձագետները գալիս են որոշակի հակասության, երբ սկսում են խոսել 2010-2011 թթ. ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի ռազմական բյուջեի՝ գրեթե 45 տոկոսով ավելացման մասին, ինչը կկազմի երկրի ընդհանուր բյուջեի ($15,9 մլրդ.) $3,1 միլիարդը: Ասել է թե՝ մեկնաբանություններն այստեղ ավելորդ են:

4. Զեկույցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում վերջին տարիներին կողմերի միջև սպառազինությունների ձեռք բերման գործընթացի արագացման հարցերին, որոնք, ըստ զեկույցի փորձագետների, էապես մեծացնում են հակամարտության գոտում լարվածության խորացումն ու պատերազմի վերսկսման հավանականությունը: Խնդրի հետ կապված թերևս տեղին է հիշատակել, որ ադրբեջանական կողմը մշտապես խախտում է Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի պահանջները, ինչը մեկ անգամ չէ, որ շեշտել է Հայաստանի Հանրապետությունը: Ավելին, պաշտոնական Մոսկվայի կողմից ԵՍԶՈՒՊ գործունեության միակողմանի դադարեցման որոշումը արտաքին լուրջ պլացդարմ հանդիսացավ Ադրբեջանի իշխանությունների կողմից այդ պայմանագրի պահանջների խախտմանն ուղղված քաղաքականության խորացման համար: Ավելին, զեկույցում փորձագետները անդրադառնում են նաև Ռուսաստանի կողմից Հայաստանին սպառազինությունների նոր մատակարարումներին ու այդ համատեքստում Ադրբեջանի իշխանությունների դժգոհություններին: Սակայն այդպես էլ չի խոսվում Ադրբեջանի կողմից դիպուկահարների խմբերի պատրաստման նոր ծրագրերի նախաձեռնման մասին, իսկ դա այն դեպքում, երբ զեկույցում խոսվում է շփման գծից դիպուկահարների անհապաղ հեռացման անհրաժեշտության մասին: Կողմերի միջև ռազմական մրցավազքի արագացման ու հակամարտության գոտու աղակայունացման համար Ադրբեջանի պատասխանատվության հաստատումն է նաև տարբեր հեղինակավոր միջազգային կազմակերպությունների ու փորձագետների համատեղ աշխատանքով դեռևս 2010 թ. հունիսին ներկայացված «Աշխարհի խաղաղասեր երկրները» վարկանշավորման հետազոտությունը (Global Peace Index), ըստ որի ՀՀ-ն ճանաչվել է որպես Հարավային Կովկասի ամենախաղաղասեր երկիր:

International Crisis Group
WORKING TO PREVENT CONFLICT WORLDWIDE

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Արծրուն ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Ադրբեջանը ղարաբաղյան հակամարտության հարցում հիմնական շեշտը դրել է տոտալ պատերազմ վարելու ռազմավարության վրա: Տոտալ պատերազմ իր բոլոր ձևերով ու եղանակներով՝ տեղեկատվական, դիվանագիտական, ռազմական և այլն: Պատերազմի հաջողության գրավականն, ըստ ադրբեջանական ռազմաքաղաքական ղեկավարության, պետք է աղահովեն նավթաջրածնային պաշարներից ստացվող եկամուտները: Եվ այս համատեքստում, Ադրբեջանը մեծ տեմպերով ավելացնում է սպառազինությունը և ռազմական բյուջեն: 2004-2007 թթ. ընթացքում Ադրբեջանն Ուկրաինայից ներկրել է 80.000 միավոր զենք: 2003-2008 թթ. ընթացքում Ադրբեջանի հիմնական մատակարարները եղել են Ուկրաինան (364 մլն. դոլար), Ռուսաստանը (128 մլն.) և Վրաստանը (108 մլն.): Խաղաղության խնդիրների ուսումնասիրության Ստոկհոլմի միջազգային ինստիտուտի (SIPRI) տվյալների համաձայն՝ 1998-2007 թթ. ընթացքում ադրբեջանական ռազմական ընդհանուր ծախսերն ավելացել են շուրջ 554 %-ով, իսկ 2006 թ. այն նախորդ տարվա համեմատությամբ գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով 625 մլն. դոլարի: Ադրբեջանական աղբյուրների համաձայն՝ այդ երկրի ռազմական ծախսերը 2004 թ. 170 մլն. դոլարի փոխարեն 2008 թ. հասել է 1,5 մլրդ. դոլարի: 2011 թ. Ադրբեջանի ռազմական բյուջեն արդեն հասատվել է 2 մլրդ. 511 մլն. մանաթ, որը հավասար է մոտ 2,8-3 մլրդ. դոլարի: Նախորդ տարվա համեմատ այն ավելի է 1 մլրդ. 187 մլն. մանաթով: Ադրբեջանական ռազմական բյուջեի ավելացումն ունի կոնկրետ հասցեականություն: Ստեղծվել է ռազմական արդյունաբերության նախարարություն: Տարբեր երկրների հետ կնքվում են ռազմական համագործակցության տասնյակ պայմանագրեր: Ադրբեջանը թուրքական, իսրայելական և այլ երկրների ռազմաարդյունաբերական ընկերությունների հետ կնքում է սպառազինությունների գնման, արդիականացման, համատեղ արտադրության պայմանագրեր: Ադրբեջանական բանակի սպառազինության արդիականացման հարցում հետաքրքրական է նաև տարատեսակ անօդաչու թռչող սարքերի (այսուհետ՝ ԱԹՍ) ձեռք բերումը: Նախկինում Իսրայելից ձեռք էին բերվել Aeronautics Defense Systems Ltd. ընկերության «Orbiter» և «Aerostar» ԱԹՍ-ներ, որոնք բազմիցս կիրառվել են զինված ուժերի շփման գոտում: Ադրբեջանը ցանկանում էր նաև արտադրել սովորական ու անգամ մարտական ԱԹՍ-ներ իսրայելական ընկերությունների հետ համատեղ: Վերջերս, սակայն, հասկանալի պատճառներով նման սարքերի ձեռք բերման համար պայմանագիր կնքվեց թուրքական TAI (Turkish Aerospace Industries, Inc) ընկերության հետ, որը ստեղծում է «Turna» ԱԹՍ-ներ:

Ըստ ադրբեջանական տեղեկատվության՝ Ադրբեջանի ռազմական արդյունաբերության նախարարությունը բանակի համար արդեն արտադրում է ավելի քան 400 անուն ռազմատեխնիկական նշանակության արտադրատեսակ: Դրանց մեջ են զրահամեքենաներ, հրաձգային զենքեր, հանդերձանքի տարատեսակ պարագաներ և այլն: Չնայած ադրբեջանական կողմի ներկայացրած տվյալներին ու հավակնություններին, նշենք, որ առաջիկայում ադրբեջանական ռազմաարդյունաբերությունը չի կարող գրանցել լուրջ հաջողություններ, ինչը կապված է մի շարք գիտատեխնիկական, արտադրական գործոնների հետ, որոնք Ադրբեջանում բացակայում են: Հետագայում փոքրիշատե հաջողություններն այդ ոլորտում կպայմանավորվեն այն հանգամանքով, որ մի քանի երկրներ՝ Թուրքիա, Իսրայել, Պա-

Ա 129

կիսան, կարող են մի շարք ռազմատեխնիկական նախագծերում ցուցաբերել աջակցություն, իրականացնել համատեղ արտադրություն, և դեռևս Ադրբեջանը երկար ժամանակ ի վիճակի չի լինի իրականացնել ինքնուրույն ծրագրեր և կախված է լինելու այդ երկրներից: Ներկայումս շատ պետություններ ակտիվորեն զբաղվում են ռազմաարդյունաբերության զարգացմամբ, որոնց ամենաչնչին հաջողություններն անգամ գրավում են Ադրբեջանին: Սակայն այստեղ հատուկ ուզում ենք շեշտել, որ նման ոլորտի զարգացման համար ամենահզոր և փորձառու երկրներն անգամ ծախսել են տասնյակ տարիներ և հսկայական միջոցներ: Ադրբեջանի ներկայիս շատ մատակարարներ իրենք նման փառահեղ ավանդույթներով չեն կարող հպարտանալ, առավել ևս նման մակարդակ դեռ երկար չի կարող ունենալ Ադրբեջանը: Մկնանակ երկրների կողմից գովազդված, սակայն իրականում անորակ կամ լուրջ թերություններով տառապող զինատեսակների արտադրության օրինակները շատ են:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հատկապես վերջին տարիներին Ադրբեջանը զգալիորեն մեծացրել է տարբեր սպառազինությունների ներմուծման ծավալները: Ադրբեջանը գնում է ամենատարբեր զենքեր՝ սկսած հին խորհրդային զենքերից մինչև պակիստանյան և իսրայելյան նորագույն նմուշները: Ներկրված սպառազինությունները հիմնականում հարձակողական են, ինչը, բնականաբար, տեղավորվում է ադրբեջանական ռազմական պլանների ու հավակնությունների շրջանակում:

Հրադադարից հետո տարբեր երկրներից ներմուծվել է մեծ քանակությամբ զենք և զինամթերք, հրթիռներ՝ «Գրադ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի (այսուհետ՝ ՀԿՌՀ) համար, ինչպես նաև «օդ-երկիր» դասի Х-25 և Х-29 հրթիռներ: Միայն 2007 թ. Ուկրաինայից գնվել է 60 հատից, նրանց համար 13 հազար արկ, տարբեր հրթիռներ և բազում այլ սպառազինություն: 2009 թ. հունիսին Իսրայելի նախագահ Շ. Պերեսի Բաքու կատարած այցի ժամանակ քննարկվել են Ադրբեջանում իսրայելական նորագույն «Նամեր» զրահամեքենաների համատեղ արտադրության հարցեր: Նշված զրահամեքենաները կարող են դիմանալ ռուսական «Метис», «Корнет» տեսակների հակատանկային հրթիռային համալիրների հարվածներին: 2008 թ. հունիսի 26-ին Բաքվում անցկացված զորահանդեսի ժամանակ ցուցադրվեց մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա և սպառազինություն: Մասնավորապես, որպես հարձակողական սպառազինություն հետաքրքրություն են ներկայացնում Ուկրաինայից գնված «МиГ-29» կործանիչները, մարտավարական հրթիռային «Точка-У» (9К79-1) համալիրները, «Смерч» (9К58) և «Linx» ՀԿՌՀ-ները:

2С4 Тюльпан

Դեռ Արցախյան գոյամարտի ժամանակ ադրբեջանական կողմից լայնամասշտաբ կիրառվում էին տարատեսակ օդային հարձակման միջոցներ (ՕՀՄ) խաղաղ բնակչության նկատմամբ: Պատերազմի ժամանակ հատկապես շատ են կիրառվել և աչքի են ընկել իրենց ավերածությունները «Գրադ» ՀԿՌՀ-ները, 500 կգ-անց և ավելի ծանր ամենատարբեր ավիացիոն ռումբեր և այլն: Միտումները նույնն են. նորից գնվում են հզոր ՕՀՄ-ներ, որոնց դերակատարությունը տարբեր տեղային պատերազմներում զգալիորեն աճել է:

Այսօր ասպարեզ են մտնում մեծ ՀԿՌՀ-ներն իրենց մի քանի հարյուր կգ հրթիռներով, որոնց մարտական մասերի քաշն անցնում է 100-150 կգ-ը և ունեն նաև կասետային մարտական մասեր: Ադրբեջանի սպառազինության մեջ կան նաև մարտավարական հրթիռներ, որոնց դիպուկությունը բարձր է, իսկ նրանց դեմ պայքարի միջոցներ գրեթե չկան: Վերջերս գնված ավանդական հրետանային համալիրները և հրանոթները ևս աչքի են ընկնում իրենց հեռահարությամբ և հզորությամբ, մասնավորապես 203,2 մմ տրամաչափի «2С7 Пион», 152 մմ տրամաչափի 2А36 «Гиацинт-Б» և 130մմ տրամաչափի «М-46» հրետանային համալիրները:

Այսինքն՝ նրանց մարտավարությունը նույնն է, ինչ նախորդ

2С7 Пион

Град

Метис

անգամ, այն տարբերությամբ, որ այս անգամ միջոցներն ավելի հզոր են:

Ադրբեջանական հարձակողական սպառազինությունների մեջ, որոնք նրանց կողմից այսօր ձեռք են բերվում, հատկապես հետաքրքիր է ՌՕՈՒ-ի և հրետանային հարձակման միջոցների հնարավորությունների վերլուծությունը:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՌՕՈՒՆ

Ներկայումս ադրբեջանական ՌՕՈՒ-ն զինված է մոտ 100 (75) միավոր մի քանի տեսակի մարտական ինքնաթիռներով և ուղղաթիռներով: Որոշ վերլուծաբաններ ու փորձագետներ լուրջ շեշտադրում են կատարում ադրբեջանական օդուժի հզորության ու հայկական կողմի նկատմամբ ունեցած առավելությունների վրա և նշում, որ հնարավոր պատերազմի դեպքում հայկական կողմի համար ամենալուրջ խնդիրը ներկայացնելու է ադրբեջանական օդուժը: Ադրբեջանական օդուժի հնարավորությունները ճիշտ պատկերացնելու համար հարկ ենք համարում անդրադառնալ տեխնիկական ու կիրառական ոլորտի մի քանի հարցերի:

Տարբեր տեղեկատվական աղբյուրների ու հրապարակումների համաձայն՝ ադրբեջանական ՌՕՈՒ-ի սպառազինության մեջ գտնվում են «МиГ-21», «МиГ-25», «МиГ-29», «Су-17», «Су-24», «Су-25», «JF-17» մարտական ինքնաթիռներ: Ուղղաթիռները ներկայացված են խորհրդային «Ми-24» և «Ми-8» արդեն բավականին հնացած մեքենաների տարատեսակներով:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի «МиГ-25[1]»-ը, որը քանակով ամենաշատն է ադրբեջանական օդուժում: Այս ինքնաթիռի համաշխարհային և հատկապես ադրբեջանական կիրառության փորձը շատ հետաքրքիր է: Սա բացառիկ տվյալներ ունեցող ինքնաթիռ է, որը պահանջում է բարձր մասնագիտական որակավորում և հատուկ վերաբերմունք տեխսպասարկման հարցում: Ունենալով մեծ արագություն, թռիչքի բարձրություն և օդային մարտի յուրահատուկ հնարավորություններ՝ «МиГ-25»-ն իրեն այնքան լավ չի դրսևորում այլ մարտական խնդիրներ լուծելիս: Ադրբեջանում ԽՍՀՄ-ից մնացել էին «МиГ-25РБ» հետախույզ ռմբակոծիչներ և «МиГ-25ПДС» կործանիչներ:

Ինչպես ցույց տվեց փորձը, այս ինքնաթիռները շատ դժվար է կիրառել ցամաքային նշանակետերին հարվածելու համար: Անհաջողության պատճառներից է «МиГ-25РБ»-ի բարդ նշանոցային հարմարանքը: Ադրբեջանն էլ Իրաքի նման չկարողացավ այդ սարքերը մշտապես ճշգրտել: Ելնելով այս իրադրությունից Ադրբեջանում օգտագործելով ինքնաթիռների վերանորոգման գործարանը ինքնաթիռները հարմարեցրին կողից ռմբանետմանը, քանի որ բնակավայրերի վրա ռումբ նետելիս առանձնահատուկ նշանոց հարկավոր էլ չէր:

Փաստորեն այս բարդ և հզոր ինքնանքթիռները կիրառվում էին որպես սովորական ռմբակոծիչներ, 50-ամյա վաղեմության մեթոդներով ռումբ նետելու համար: Կործանիչի ուժեղ կողմերը կիրառելու բնագավառ ուղղակի չկար, հայկական կողմը չուներ բարձրաթռիչք ինքնաթիռներ:

Չնայած նրան, որ ադրբեջանական ինքնաթիռները վարում էին փորձառու խորհրդային օդաչուները, նույնիսկ այս բացառիկ տվյալներ ունեցող կործանիչները Արցախյան գոյամարտում մարտական կորուստներ են ունեցել:

Մամուլում հայտնված այն տվյալները, թե օդաչուները «МиГ-25» կործանիչների օդ-օդ դասի ջերմային ինքնաուղղորդվող գլխիկ ունեցող հրթիռներով խոցել են հայկական տանկեր, չի համապատասխանում իրականությանը: Նախ՝ այս ինքնաթիռով, որն ունի մեծ արագություն և օդաչուի վաս տեսադաշտ, լեռներում զրահատեխնիկա հայտնաբերելն անգամ դժվար է, ինչ մնաց գրոհելը: Հետո՝ այդ հրթիռներով ցամաքային տեխնիկա խոցելը անհնար է՝ ելնելով տեխնիկական սահմանափակումներից: Հրթիռները նվազագույն բարձրության սահմանափակում ունեն, ինչպես նաև բեկորային մարտական մասերը չեն կարող խոցել նման զրահ: Չնայած որ ներկայումս հայկական կողմն ունի ռազմական ինքնաթիռներ, միևնույն է, «МиГ-25»-ը լեռնային տեղանքում ցածրաթռիչք օդային նշանակետերի դեմ պայքարի համար ընդհանրապես անպիտան է, քանի որ շատ ծանր է և բարձր արագությամբ է թռչում, իսկ նշանոցա-

1. «МиГ-25»-ը խորհրդային առաջին օդաչուով թռչող սարքն էր, որի արագությունը հասավ և անցավ 3000 կմ/ժ: Այն մինչև օրս աշխարհի ամենաարագ և բարձր թռչող մարտական ինքնաթիռն է:

Корнет-рокет

յին սարքավորումները և սպառազինությունը շատ հին են: Թվարկված խնդիրները այս ժամանակից դուրս գտնվող կործանիչի միակ թերությունները չեն: Կործանիչը օգտագործում է հատուկ և թանկարժեք ռեակտիվ վառելիք: Ընդ որում՝ «МиГ-25»-ը մեկ թռիչքի ընթացքում օգտագործում է ադրբեջանական այլ ինքնաթիռներից նվազագույնը կրկնակի անգամ շատ վառելիք, որը գումարած գնի հետ՝ մեծ ծախսեր է պահանջում:

Այսինքն՝ նման կործանիչը ադրբեջանական ՌՕՈՒ-ին առհասարակ պետք չէ, սակայն, ինչպես երևում է, նրանք այդպես չեն կարծում, քանի որ 1998 թ. Ադրբեջանը Ղազախստանից գնել է ութ «МиГ-25» կործանիչ, որոնց վիճակը, հաշվի առնելով տարիքը, բնականաբար, չէր կարող լինել իդեալական: Տարբեր տեղեկությունների համաձայն ներկայումս Ուկրաինան վերանորոգում է այս ինքնաթիռները: Հնարավոր է՝ դրանք հագեցվում են այնպիսի սարքավորումներով, որոնք հնարավորություն կտան ռմբանետում կատարել:

Այժմ նշենք ադրբեջանական օդուժի քանակով երկրորդ կործանիչի՝ «МиГ-29»-ի մասին, որը տարբեր փորձագետների կարծիքով դիտարկվում է որպես ամենավտանգավորը հայկական ՌՕՈՒ-ի համար: Ինչպես ցույց է տվել կիրառության փորձի և հնարավորությունների մեր սեփական ուսումնասիրությունը, այս կործանիչը տպավորիչ է միայն ցուցադրական թռիչքների և զորահանդեսների ժամանակ: Խորհրդային չորրորդ սերնդի ռեակտիվ այս կործանիչը, որն իր տեսակի մեջ լավագույնն է համարվում շատ մասնագետների հավաստմամբ, մինչև օրս մասնակցել է մի քանի մարտական գործողությունների և ոչ մի տեղ աչքի չի ընկել: Կիրառվելով Իրաքում, Հարավսլավիայում և Աֆրիկայում, «МиГ-29»-ը օդային մարտերում պայքարել է իր սերնդակից կործանիչների դեմ և չունենալով ոչ մի աղացուցված հաղթանակ կրել է մոտավորապես 15-20 պարտություն: Սակայն այս կործանիչը մենք միայն նշված փաստերի հիման վրա չէ, որ անարդյունավետ ենք համարում մեր տարածաշրջանում:

«МиГ-29»-ը, ունենալով լավ արագացումային և մերձակա օդային մարտի համար անհրաժեշտ խուսափման տվյալներ, միաժամանակ ունի թռիչքի փոքր հեռավորություն, սպառազինության փոքր տեսականի ու քաշ և գրեթե չի կարող կիրառվել վերգետնյա նշանակետերի նկատմամբ: 1999 թ. մայիս-հուլիս ամիսներին Հնդկաստանի և Պակիստանի միջև տեղի ունեցած Կարգիլյան հակամարտության ժամանակ, բարձր լեռնային պայմաններում, ոչ մի խորհրդային արտադրության ինքնաթիռ չկարողացավ մարտական խնդիրը կատարել անհրաժեշտ որակով: Ի վերջո հիմնական բեռը ընկավ ֆրանսիական «Mirage-2000» կործանիչի վրա, որին ուղեկցող «МиГ-29»-ները ընդամենը 20 րոպե էին կարողանում ուղեկցել վերջիններիս: Լեռնային տեղանքում ցածրաթռիչք գրոհիչներին և ուղղաթիռներին վնասազերծելու համար, ոչ փոքր արագությամբ թռչող կործանիչը մեծ հնարավորություն չունի: «МиГ-29»-ը բազմաֆունկցիոնալ չէ, իսկ մեր տարածաշրջանում նման կործանիչները մեծ հեռանկար չունեն: Ահա այն պատճառները, որոնց հիման վրա, մեր կարծիքով, այս կործանիչը մեր տեղանքում չի համապատասխանում առաջադրված պահանջներին: Այն իհարկե որոշակի լուծում է, սակայն հիմնականում կարճաժամկետ և սահմանափակ:

Ինչ վերաբերում է «МиГ-21» և «Су-17» ինքնաթիռներին, ապա դրանք էական ազդեցություն չունեն ադրբեջանական ՌՕՈՒ-ի որակական հատկանիշների վրա, քանի որ տեխնիկապես գտնվում են վաս վիճակում և քանակով սահմանափակ են:

Ադրբեջանական ՌՕՈՒ-ի մնացած ինքնաթիռներից առանձնակի ուշադրության արժանի են «Су-24» և «Су-25» ինքնաթիռները, որոնք բավականին հզոր մարտական միջոցներ են: Սակայն սրանց հետ կապված ևս բազում խնդիրներ կան: Նախ՝ դրանք բավականին հին են, չեն կարող կիրառվել թույլատրելի բոլոր ռեժիմներում, հետո՝ չեն կրում ժամանակակից նշանառման սարքավորումներ և գերճշգրիտ սպառազինություն, որոնց հասցրած վնասները սովորական սպառազինության հետ համեմատած զգալիորեն մեծ են: Սովորական սպառազինությամբ ՕՀՄ-ների կիրառությունը արդյունավետ չէ, հատկապես լեռնային տեղանքում: Եթե խորհրդային փորձառու օդաչուները այս ինքնաթիռներով երբեմն սխալվում էին ռմբակոծություն կատարելիս, ապա նույնը կարող են անել նաև ադրբեջանցի օդաչուները, որոնք նախորդների նման թռիչքաժամեր և մարտական կիրառության փորձ, բնականաբար, չունեն: (Օդա-

Метис-рокет

Ми-24

МиГ-25

չունների ռմբահարության սխալների պատճառով 1994 թ. մարտի 25-ին Հորադիզում երկու ինքնաթիռ հարվածում են ադրբեջանական դիրքերին: Տես Жирохов М., Авиация в армяно-азербайджанском конфликте // www.airwar.ru.)

Մնում է չին-պակիստանյան «JF-17» ինքնաթիռը, որն առայժմ անհասկանալի է՝ կործանիչ է, կործանիչ-ռմբակոծիչ, թե ուղղակի գրոհիչ: Ինչևէ, այն մեծ վտանգ չի ներկայացնում, քանի որ, նախ, չի կարող կրել մեծ ռումբեր, հետո՝ դեռ լիովին փորձարկված չէ, հատկապես մարտական գործողությունների ժամանակ: Այս ինքնաթիռի բարձրակարգությունը կասկածելի է նաև նրանով, որ այն ստեղծված է խորհրդային և այլ հին տեխնոլոգիաների չին-պակիստանյան տեղայնացմամբ, որոնք, ինչպես ցույց է տվել փորձը, զիջում են իրենց բնօրինակներին:

Ուղղաթիռները, ինչպես նշեցինք, արդեն բավականին հին են և քանակն էլ այդքան մեծ չէ, նրանք չունեն գերձգրիտ սպառազինություն և արդիական սարքավորումներ:

«Ми-24» և «Ми-8» ուղղաթիռները բազում մարտական գործողություններում կիրառված և իրենց արդարացրած մեքենաներ են, սակայն դրանք արդեն բարոյապես հնացած են:

Ադրբեջանը իր սպառազինությունում եղած որոշ «Ми-24» ուղղաթիռներ ուկրաինական և Հարավաֆրիկյան Հանրապետության մասնագետների հետ ենթարկում է լուրջ կատարելագործումների: Դրանք, ճիշտ է, ինչքան էլ կատարելագործվեն, հին են, սակայն նոր սարքավորումները և սպառազինությունը բավականին բարձրացրել են այս ուղղաթիռների մարտական հնարավորությունները:

«Ми-24»-ի հիմնական թերությունը, որպես հարվածային ուղղաթիռ, չափերն ու շարժիչներն են: Լրացուցիչ դեսանտային բաժինը, մեր խորին համոզմամբ, արդեն վաղուց իրեն սպառել է: Իր դասի մեջ ոչ մի ուղղաթիռ այսօր չունի նման բաժին, հետևաբար՝ նման չափեր և քաշ: Դեռ աֆղանական պատերազմի ժամանակ մասնագետները եկան այն եզրակացության, որ «Ми-24» ուղղաթիռի քարշազինվածությունը (էներգազինվածությունը) քիչ է հատկապես բարձր լեռնային պայմաններում, որտեղ շարժիչների հզորությունն զգալիորեն նվազում է: Սրանից բացի, մոտ հեռանկարում Ադրբեջանը կարող է ձեռք բերել Թուրքիայում արտոնագրով արտադրվող իտալական «T-129» մարտական ուղղաթիռներ, որոնք բավականին հզոր հարվածային միջոցներ են:

Ադրբեջանական ՌՕՈՒ-ն, ինչպես տեսանք, համալրված է տեխնիկապես բազմազան և հիմնականում ոչ արդիական մեքենաներով: Նման բազմազանությունը չի կարող դրական ազդեցություն թողնել մարտական հնարավորությունների վրա: Ռազմական տեխնիկայի քանակով ոչ այնքան մեծ ադրբեջանական ՌՕՈՒ-ն կազմված է մի քանի տեսակի ինքնաթիռներից, որոնք բնականաբար պահանջում են առանձին, միմյանցից անկախ սպասարկումներ, սպառազինություն, մասնագիտացում և այլն:

Ադրբեջանցի օդաչուները չունեն հին դպրոց և ավանդույթներ: ԽՍՀՄ-ի ժամանակ ադրբեջանցի ռազմական օդաչուներ գրեթե չկային, ինչի ականատեսը եղանք Արցախյան գոյամարտում: Ներկայիս օդաչուները, ճիշտ է, ուսում են ստացել ուկրաինական օդաչուական ուսումնարաններում, որոնք խորհրդային լավագույն ավանդույթների շարունակողներն են, սակայն նրանք մարտական փորձ չունեն, չեն տիրապետում գերձգրիտ սպառազինությունների կիրառմանը և ժամանակակից պատերազմների վարման հմտություններին: Նրանք հիմնականում խորհրդային մոդելով են կրթված: Եթե այս ամենին ավելացնենք նաև բանակում տիրող պետական միջոցների յուրացումներն ու մսխումները, ապա կարելի է եզրակացնել, որ ադրբեջանական ՌՕՈՒ-ն դեռ հզոր զորատեսակ չի կարող համարվել: Վերջերս Ադրբեջանում ուկրաինական օգնությամբ բացված օդաչուական պատրաստության կենտրոնը լավագույնս ապացուցում է այն տեսակետը, որ նրանք դեռևս չունեն օդաչուների պատրաստման ինքնուրույն բազա:

ՀԱԿԱՄԻՋՈՑՆԵՐ

Մեզ համար որպես հարձակման հզոր և ճկուն միջոցներ կարևոր են դառնում մեծ ՀԿՈՀ-ների նոր զարգացումները: Բանն այն է, որ նման համալիրները չունեն մեծ դիմադրություն, և այդ պատճառով շատ երկրներ հրաժարվում են դրանց լայն կիրառությունից: Այսինքն՝ փոքր տրամաչափի ՀԿՈՀ-ները իրենց արկերի մեծ ցրվածության և մարտական ոչ մեծ մասերի

МиГ-29

պատճառով այնման արդյունավետ չեն, հատկապես լեռնային տեղանքում, որտեղ կրակի դիպուկությունը առավել կարևոր է: Հայաստանի համար ևս անարդյունավետ և անիմաստ է ունենալ սովորական «Смерч» կամ նրան համարժեք այլ համալիրներ (առանձնապես «БМ21 Град» և այլն): Շատ պետություններ, այդ թվում Իսրայելը և ԱՄՆ-ն, իրենց սպառազինության մեջ չունեն փոքր և միջին տրամաչափի ՀԿՌՀ-ներ:

Վերջին ժամանակներս հրթիռային տեխնոլոգիաների և միկրոէլեկտրոնիկայի զարգացումը թույլ տվեց մեծ համալիրները կատարելագործել այն աստիճան, որ դրանց հրթիռները մի փոքր մեծացվելով՝ վերածվում են գրեթե մարտավարական հրթիռների: «MLRS», «Смерч», «WM-80», «WS-1B», «LAR-160», «MAR-290» և այլ համալիրները կատարելագործվելով՝ վերածվել են «մինի» մարտավարական հրթիռային համալիրների: Հրթիռների դիպուկությունը, հիմնականում շնորհիվ արբանյակային նշանառման, աճել է մի քանի տասնյակ անգամ: Իհարկե, հրթիռների մեծացմամբ՝ արձակման կայանների վրա նախկին 8-12-ի փոխարեն այսօր տեղադրվում են 2-4 հրթիռներ, սակայն դա դառնում է անգամ առավելություն: Օրինակ՝ ամերիկյան 240 մմ «MLRS» բազմաֆունկցիոնալ ՀԿՌՀ-ն, որն ունի մի քանի տեսակի՝ մինչև 30-40 կմ հեռահարություն ապահովող, չղեկավարվող, մեծ մարտական մասերով մինչև 12 հրթիռների (M-26) արձակման հնարավորություն: Բացի դրանից, այս համալիրի արձակման կայանից կարելի է արձակել երկու «ATACMS» հրթիռներ (MGM-140 և MGM-164՝ իրենց մարտավարական և օպերատիվ մարտավարական տարբերակներով): Այս հրթիռների տարատեսակները հարմարեցված են ամենատարբեր պայմաններում կիրառելու համար: «MLRS»-ն ունի թրթռավոր արձակման շարժական կայան: Փաստորեն «MLRS» բազմաֆունկցիոնալ ՀԿՌՀ-ն փոխարինում է ռուսական «Смерч (9К58)» ՀԿՌՀ-ներին, «Точка-У (9К79-1)» մարտավարական և «Искандер-Э (9К723)» օպերատիվ- մարտավարական հրթիռներին միաժամանակ: Մեկ արձակման կայանով երեք տեսակի ՕՀՄ ունենալը լավ հնարավորություն է, ինչն ավելի նպատակահարմար է նաև մեզ համար: Չինական 273 մմ «WM-80» ՀԿՌՀ-ի նոր հրթիռները կարող են արձակվել մինչև 120 կմ: Իսկ ավելի կատարելագործված «Guardian-2» հրթիռները, որոնք մեծացվել են մինչև 406 մմ-ի, կարող են նշանակետեր խոցել մինչև 280 կմ հեռավորության վրա և ղեկավարվում են արբանյակային նշանառությամբ: Վերջին հրթիռներով, իհարկե, արձակման կայանի վրա արդեն տեղադրվում է ոչ թե ութ, այլ՝ երեք հրթիռ: Սրանք հետաքրքիր հնարավորություններ են մեզ համար:

Հետաքրքիր զարգացում է ստանում նաև ռուսական «Смерч»-ը, որը գրեթե նույն ճանապարհով դառնում է բոլորովին այլ համալիր:

Նմանատիպ հրթիռների կիրառության գործում մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես ԱԹՍ-ները, որոնք, բազում մարտավարական խնդիրներից զատ, կարող են նաև հանդիսանալ մարտավարական հրթիռային համալիրների նշանառման համակարգեր: ԱԹՍ-ների ճիշտ կիրառությամբ կարելի է հասնել զգալի տեղեկատվական առավելության, որն էլ ներկայումս որոշիչ է համազորային մարտում:

Հրետանու հրանոթային սպառազինության տեսակների մեջ ևս անհրաժեշտ է ստեղծել հակակշիռ: Ներկայումս ադրբեջանական բանակի սպառազինության մեջ գտնվող 203,2 մմ «2С7 Пион» հրետանային համալիրը բավականին հզոր հարձակողական միջոց է: Համալիրի «2А44» հրանոթը սովորական արկերով կարող է խոցել թիրախներ 37,5 կմ հեռավորության վրա, ակտիվ ռեակտիվ արկերով՝ մինչև 55 կմ հեռավորության վրա, իսկ արկերը մոտ երկու անգամ ծանր են 152 մմ արկերից: Նման հրանոթները պատերազմի ժամանակ կիրառվում են սահմանափակ դեպքերում և հատուկ թիրախների նկատմամբ, դրանք շնորհիվ իրենց հեռահարության հակամարտկոցային մենամարտերից դուրս են:

Նշված առավելություններով հանդերձ՝ մեծ հզորության հրանոթա-հրետանային նման համալիրներն ունեն լուրջ թերություններ. դրանք ծանր են, կրակի արագաձգությունը մեծ չէ, իսկ տվյալ համալիրի հրանոթի բարձրացման անկյունը չի անցնում 60°-ից: Փաստորեն համալիրի ծանրությունը և հրանոթի բարձրացման փոքր անկյունը մեր տարածաշրջանի համար այն դարձնում են անարդյունավետ:

Դրա փոխարեն կարող է կիրառվել նույնպես խորհրդային արտադրության 240 մմ «2С4 Тюльпан» ինքնագնաց ականանետը: Վերջինս նախորդին

Точка-У

Mirage 2000

զիջում է միայն կրակի հեռահարությամբ, սակայն դա բնական է, քանի որ ականանետը երբեք հրանոթին մրցակից չի եղել: Ընդհանուր համալիրը «2С7 Пион»-ից թեթև է մոտ երկու անգամ, արկերը ծանր են, հետևաբար հզոր 1,1-2,2 անգամ, իսկ կրակի դիզայնությունը բարձր է 10-30%-ով: «2С4 Тюльпан» ականանետը հաջողությամբ պայքարում է երկաթբետոնե ամրաշինական կառույցների դեմ, կարող է կրակ բացել մինչև 80° բարձրացված հրանոթով: Ականանետը ունի հատուկ, ուղղորդվող արկեր՝ «Смельчак», որոնց կիրառությունը Աֆղանստանում և Չեչնիայում ապացուցեց դրանց բարձր արդյունավետությունը: Թիրախները ընդամենը 2-4 արկերով ոչնչացվում էին 80% արդյունավետությամբ, իսկ սովորական արկերով՝ խնդիրը կատարվում էր 4-6 արկերով: Այս ամենը լեռնային տեղանքում «2С4 Тюльпан» ականանետը դարձնում է հզոր միջոց: Նման ականանետների սահմանափակ քանակն անգամ կարող է լուրջ հնարավորություն տալ համազորային մարտում, դրանք արդյունավետ են նաև առանձին խնդիրների լուծման ժամանակ:

Ադրբեջանական ՌՕՈՒ-ի հետ պայքարի համար անհրաժեշտ է ունենալ որակապես հզոր օդուժ: Հիմնական գործիքը այս գործում պետք է լինեն կործանիչները, իսկ զենիթահրթիռային համալիրները պիտի լրացնեն նախորդներին:

Ավիացիայի կիրառության և ՀՕՊ համալիրների հակազդեցության համաշխարհային փորձը վերջին տեղային պատերազմներում գալիս է ապացուցելու, որ մարտական պայմաններում յուրաքանչյուր խոցված ինքնաթիռի վրա միջինը ծախսվել է «երկիր-երկինք» դասի առնվազն 5 հրթիռ: Մինչ օրս գրեթե իդեալական պայմաններում լավագույն ցուցանիշը ապահոված ամերիկյան «Patriot» ԶՀՀ-ն Իրաքում յուրաքանչյուր խոցված թռչող սարքի համար ծախսել է 1-3 հրթիռ: Այլ համալիրների ցուցանիշներն ավելի վատ են:

Հատկապես հայկական կողմի համար անհրաժեշտ է դառնում կործանիչ ավիացիայի առկայությունը, որը ՀՕՊ-ի հիմնական դերակատարն է: Հայկական ՌՕՈՒ-ին հարկավոր է այնպիսի կործանիչ, որը լինի բազմաֆունկցիոնալ, ունենա ժամանակակից զենքեր կիրառելու և կառավարման արդիական համակարգերի հետ ինտեգրվելու հնարավորություն:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆՆԵՐ

Հետևելով արդբեջանական բանակի զինման տեմպերին, ձեռք բերվող զենքերի տեսակներին, նրանց ղեկավարության մշտական ռազմատենչ հայտարարություններին՝ տեղին ենք համարում համեմատականներ անցկացնել 1967-70 թթ. արաբա-իսրայելական հակամարտությունից:

1967 թ. «վեցօրյա պատերազմում» Իսրայելի տարած հաղթանակից մեկ ամիս անց Գ. Ա. Նասսերը, հիմնվելով Եգիպտոսի նավթագազային եկամուտների և Իսրայելի հետ համեմատած մեծ մարդկային քանակի, հրետանային և այլ միջոցների վրա, նախաձեռնեց «հյուծման

Су-25

Смерч (9К58)

պատերազմ» Իսրայելի նկատմամբ: Ճիշտ է, բացահայտ այդ մասին հայտարարվեց միայն 1969 թ. մարտի 8-ին (այլ տվյալներով՝ հունիսի 23-ին), սակայն երկու տարի անընդմեջ Սուեզի ջրանցքի երկու կողմերից շարունակվում էին հրետանային մենամարտերը, ավիացիոն հարվածները և հետախուզադիվերսիոն գործողությունները: Հյուծման պատերազմը ընթանում էր հենց «նասսերական» սցենարով, Իսրայելը ստիպված էր մնալ միշտ լարված վիճակում, զորահավաքի տակ պահել մեծ ուժեր, ծախսել զգալի քանակությամբ զինամթերք և այլն, ինչը հսկայական ծախսերի հետ էր կապված: Բացի սրանից, իսրայելական հասարակությունը ավելի զգայուն էր զոհերի նկատմամբ: Նասսերի հաշվարկով այս ամենը կստիպեր Իսրայելին բանակցությունների ժամանակ ավելի զիջող լինել: Կարծում ենք, այս ամենը շատ նման է ադրբեջանական հաշվարկներին:

1968 թ. սեպտեմբերի 8-ին եգիպտական հրետանին ամբողջ ջրանցքի երկայնքով համազարկային կրակ բացեց, որը տևեց 6 ժամ, արձակվեցին 10.000 հրետանային տարատեսակ արկեր: Սակայն հրետանային կրակից իսրայելական կորուստները շատ մեծ չեղան՝ զոհվեց 10 և վիրավորվեց 18 զինծառայող: Հաջորդ հզոր հրետանային կրակը տեղի ունեցավ հոկտեմբերի 26-ին, որը նույնպես տևեց մի քանի ժամ, զոհվեց իսրայելցի 13 և վի-

MLRS

WM-80

ղալ և մշակեց սեփական գործողությունների մարտավարություն: Որպես կրակային հզորություն Իսրայելը կիրառեց իր ավիացիան, որով մեծ հաջողությամբ նախ ոչնչացրեց մեկ նավթամշակման գործարան, հետո վնասազերծեց եգիպտական հրետանին: 1969 թ. մայիսից մինչև նոյեմբեր եգիպտական ավիացիան կորցրեց մոտ 50 ինֆնաթիռ, իսկ իսրայելական ավիացիան մոտավորապես 10 ինֆնաթիռ: Եգիպտական ամբողջ ՀՕՊ-ը շարֆից հանված էր: Մինչև դեկտեմբեր եգիպտական բանակի իրական և բարոյական կորուստները ահռելի չափերի հասան: Տարբեր տվյալներով՝ եգիպտական մարդկային կորուստները «հյուծման պատերազմում» 3-5 անգամ ավելի մեծ էին իսրայելականից: Եթե չլիներ խորհրդային անվերջանալի օգնությունը, եգիպտական բանակը վաղուց կմնար առանց զենքի, սակայն այնուամենայնիվ Նասսերը իր մտադրություններից չէր հրաժարվում: Այստեղ եգիպտական և ադրբեջանական մոտեցումների առկա նմանությունները հստակորեն բացատրվում են ռազմական տեսաբան Կ. ֆոն Կլաուզևիցի խոսքերով, որ սովորաբար պարտություն կրած կողմը հետ չի հաշտվում այդ մտքի հետ և միշտ հարմար առիթ է որոնում սկսելու ռևանշային իր պատերազմը: Այսօր դժվար է գտնել մի ադրբեջանական զինվորականի կամ քաղաքական գործչի, որը չշեշտադրի նավթաղոլարների հաշվին մոտ ապագայում հաղթանակ տանելու հեռանկարի մասին: ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահ, Ռուսաստանյան դիվանագետների ասոցիացիայի փոխնախագահ Վլադիմիր Կազիմիրովի խոսքերով՝ ներկայումս գոյություն ունեցող որևէ այլ հակամարտության մեջ չկա

С-300ПМУ-2 Фаворит

rավորվեց 34 զինծառայող: Այս իրադարձությունները ստացան «սև շաբաթ» անունը: Հաշվի առնելով եգիպտական հրետանու ծախսերը՝ արդյունքները մեծ չէին, սակայն Իսրայելում դրանց դեմ հակաքայլեր ձեռնարկելու ուղղությամբ լրջորեն մտածում էին: Չորս ամիսների ընթացքում պաշտպանական ամրաշինական կառույցները ամրացվեցին, բարձրացվեցին մինչև 25 մետր և լայնքը հասցվեց 200 մետրի: 160 կմ երկարությամբ պաշտպանական «Բար Լեվի» բնագիծը անառիկ էր թվում: Արդյունքները երկար սպասել չտվեցին, 1969 թ. մարտի 8-ին տեղի ունեցած հրետանային կրակի ժամանակ ոչ մի մարդ չմահացավ, իսկ հարձակվող եգիպտական ինֆնաթիռներին օդում խոցեցին իսրայելական կործանիչները: Եգիպտոսը, սակայն, շարունակում էր իր ընտրած մարտավարության իրականացումը. մարտ և ապրիլ ամիսներին տեղի ունեցան մի քանի հրետանային մենամարտեր, որոնց ընթացքում երկու կողմից էլ լինում էին կորուստներ, Եգիպտոսը անտեսում էր դրանք, իսկ Իսրայելը՝ չէր կարող:

Այս առումով առկա են ընդհանուր համեմատականներ Ադրբեջանի տոտալ պատերազմի ռազմավարության վրա հիմնված մոտեցումների ու արաբա-իսրայելական վերոնշյալ ռազմական բախման միջև:

Իսրայելը շուտով հասկանալով այս ամենի կործանարար արդյունքները, հրաժարվեց եգիպտական կանոններով խա-

նման ուժային ռևանշի տրամադրվածություն: Շփման գծում չկան այսքան միջադեպեր, սադրանքներ, չկա ռազմական բյուջեների նման անհամաչափություն:

Եգիպտոսին իր մտադրություններից հրաժարվել ստիպեց միայն հերթական՝ 1973 թ. «Դաստասանի օր» պատերազմում կրած բացահայտ պարտությունը:

Ակնհայտորեն տեսնելով նմանություններ Ադրբեջանի որդեգրած ռազմավարության և արաբա-իսրայելական պատերազմների ժամանակ Եգիպտոսի ընտրած պետական ռազմական ուղեգծի միջև, կարող ենք եզրակացնել, որ հատկապես 21-րդ դարի՝ տեխնոլոգիաների վրա հիմնված պատերազմների դարաշրջանում սպառազինության քանակի ու ֆինանսական միջոցների վրա հույս դնելը ուղղակի նման է ինֆնախաբկանքի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս ադրբեջանական բանակի սպառազինությունը գերազանցում է միջազգային կազմակերպությունների կողմից թույլատրված քանակը, իսկ նրանք թաքցնում են այդ տվյալները: Հատկապես քանակն ավելի է տանկերի, զրահամեքենաների և հրետանային համալիրների տեսակներում, որոնք, բնականաբար, հարձակողական զինատեսակներ են:

Վերջերս հրապարակվեցին տեղեկություններ ՌԴ-ի կողմից Ադրբեջանին «С-300ПМУ-2 Фаворит» տեսակի երկու զենի-

թահրթիռային համակարգերի (այս զենքերի յուրաքանչյուր դիվիզիոնը կարող է կազմել հենց մեկ համակարգ) մատակարարման մասին:

Տեղեկանք. Չնայած նրան, որ մատակարարման մանրամասների մասին պաշտոնապես ոչ մի տեղեկություն չի հաստատվել, սակայն այս դեպքերում «С-300ПМУ-2 Фаворит» տեսակի զենիթահրթիռային համալիրները մատակարարվում են այլ համալիրների հետ համագործակցության ու տարատեսակ լրացուցիչ սարքավորումներով, ռադիոտեղորոշման կայաններով և ղեկավարման կետերով, որոնց հետ միասին կազմում են համակարգ: Երկու դիվիզիոնների կազմում սացվելու է 16 արձակման կայան: Յուրաքանչյուր արձակման կայանի վրա կարող են տեղադրվել չորսական «48Н6Е» կամ տասնվեցական «9М96» հրթիռներ:

Այն մեկնաբանությունները, որ նման համակարգերի Ադրբեջանում հայտնվելը ֆիզ հավանական է, կամ այն զուտ պաշտպանական զենք է և ՀՀ անվտանգությանը չի սպառնում, առնվազն անհիմն են և միամտություն: Նման համակարգերը որակապես մի քանի աստիճան տարբերվում են մինչ այժմ մեր տարածաշրջան ներմուծված զենքերից: Այս համակարգը հայտնի «С-400 Триумф»-ի նախատիպն է և ֆիզ բաներով է զիջում վերջինիս: «С-300 ПМУ-2» համակարգը հզոր հակաօդային միջոց է, որը կարող է պայքարել տարատեսակ թռչող սարքերի, այդ թվում նաև հրթիռների դեմ: Ինքնաթիռներին և ուղղաթիռներին այն կարող է խոցել մինչև 200 կմ հեռավորության վրա, իսկ մարտավարական և օպերատիվ մարտավարական բալիստիկ հրթիռներին՝ մինչև 40 կմ հեռավորության վրա: Հենց վերջին հատկանիշն է, որ մեզ առավելապես պիտի հետաքրքրի, քանի որ հին տեսակի նմանատիպ օդային հարձակման միջոցները (հրթիռներ, որոնց հեռահարությունը չի անցնում 500 կմ-ը, իսկ անկման արագությունը կազմում է մինչև 4-4,5 կմ/վ) հեշտությամբ կխոցվեն: Մասնավորապես, եթե դրանց քանակը փոքր է և դրանք չեն կարող կիրառվել այլ օդային հարձակման միջոցների հետ մասսայական արձակումներով: Այս համակարգերը լուրջ դիսբալանս են առաջացնելու տարածաշրջանում: Օդային հարձակման միջոցները որակապես բոլորովին նոր մակարդակի պիտի լինեն, կամ քանակապես շատ (մի քանի տասնյակ կամ հարյուր), որպեսզի միաժամանակյա արձակումներով հավակնություն ունենան «С-300 ПМУ-2»-ի պաշտպանությունը հաղթահարելու:

Տեղեկանք. Նման խիտ կիրառությունները պարտադիր չէ, որ լինեն հենց նշված հրթիռներով: Շատ դեպքերում նման խտություն ապահովում են հրթիռահրետանային և ավիացիոն միջոցների միաժամանակյա կազմակերպված գործողություններով:

«С-300 ПМУ-2» համակարգերը մեծ հնարավորություններ ունեն այլ համանման զենքերի հետ համագործակցելու և պաշտպանական մեկ դաշտ կազմելու գործում: Դրանք կարող են համակարգային կիրառմամբ մեծ տարածքներ պաշտպանել համագործակցելով նաև կործանիչ ինքնաթիռների հետ: Հեռանկարում էլ տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը պահպանելու համար հարկավոր կլինեն նոր սերնդի ամենաարդիական թռչող սարքեր, որոնք զենքի մրցավազքը բոլորովին այլ մակարդակի կբարձրացնեն: Այս համակարգերը ստեղծվում են «Ալմազ-Անթեյ» կոնցեռնի կողմից, որի նախագահն է ծնունդով բաքվեցի, ադրբեջանական ծագումով Իգոր Ռաուֆի Աշուրբեյլին: Վերջերս մի աղմկահարույց գործ բացվեց, կապված «С-400» համակարգի ստեղծման ծրագրի գումարների մսխման (մի քանի միլիարդ ռուբլիներ) հետ, որի հեղինակը պարոն Աշուրբեյլին էր: Նա, շնորհիվ վերևներում իր ծանոթությունների, ոչ միայն ջրից չոր դուրս եկավ, այլ նաև շարունակում է աշխատել և մեծ ծառայություններ մատուցել իր հայրենիքին:

Այսօր հատկապես անհրաժեշտ է փորձագիտական մակարդակով վերլուծել մեր կողմից լեռնային տեղանքում վարված հարձակողական մարտական գործողությունների և համաշխարհային համանման զարգացումների փորձը, որոնք պետք է հիմք հանդիսանան հետագա ռազմական գործողությունների վարման նոր պահանջներին: Կրկին անգամ անդրադառնալով նոր դարաշրջանի պատերազմների վարման սկզբունքներին՝ պետք է փաստենք, որ հայկական ԶՈՒ-ի համար, բարձր մարտական ոգու հետ մեկտեղ, կենսական նշանակություն է ձեռք բերում այնպիսի սպառազինությունների ներդրումը, որոնք կարող են ապահովել առավելագույն արդյունավետություն մարտական գործողություններում, ստիպված չլինելով հիմնվել սպառազինության ու մարդկային քանակի վրա: Հարկավոր են հզոր օդային հարձակման միջոցներ, որոնց վնասները չափազանց ցավագին կլինեն հակառակորդի համար: Դրանք են հարվածային գերճշգրիտ միջոցները, էլեկտրոնային հետախուզման և կառավարման նորագույն համակարգերով:

С-400 Триумф

Արևմտյան Հայաստան. բնիկ ժողովրդի իրավատիրությունը

Լևոն Շիրինյան

Դիպուկ է ասված. «Հայ ժողովուրդը երկրորդ հազարամյակ է տանում իր «պատմական բեռը»՝ Հայկական հարցը որպես ռազմավարական ծրագիր: ...Հայաստանի ավանդական աշխարհագրությունը չի փոխվել: Չի փոխվել նաև վերջին՝ շուրջ հազար տարվա ազգային թշնամին, որը կազմակերպել է Հայոց ցեղասպանությունը և գրավել հայոց հայրենիքի տարածքի շուրջ 90%-ը: Օրակարգում է գտնվում թուրքախոս ժողովուրդների ազգային գաղափարախոսությունը՝ պանթուրքիզմը, որի իրականացումը նշանակում է Հայաստանի և հայ ժողովրդի ոչնչացում»[1]:

Դույզն իսկ չի փոխվել թուրքի ազգային մտայնությունը: XX դարի Մեծ ոճիրի կազմակերպիչներից Հալիլը, ժամանակի Օսմանյան խորհրդարանի նախագահը, 1946-ին իր հուշերում գրում է. «Եթե մեր արևելյան վիլայեթները (այսինքն՝ Արևմտյան Հայաստանը.- Լ. Շ.) մենք չմաքրագործեինք հայ հեղափոխականներից, որոնք համագործակցում էին ռուսների հետ, մեզ համար անհնար կլիներ հիմնադրել մեր ազգային պետությունը»[2]: 2008 թ. նոյեմբերին քաղաքակիրթ Եվրոպայի սրտում՝ Բրյուսելում, քաղաքակրթված Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլը «խորիմաստորեն» փիլիսոփայում է. «Մի՞թե գոյություն կունենար այսօրվա ազգային թուրքական պետությունը, եթե հույները մնային Էգեյան ծովին հարակից տարածքներում, իսկ հայերը շարունակեին ապրել Թուրքիայի տարածքների մի մասում (այսինքն՝ իրենց հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում.- Լ. Շ.): Չգիտեմ, ինչ բառեր կարելի է գործածել բնակչության այս փոփոխության կարևորությունը բացատրելու համար (չի ուզում ասել՝ «ցեղասպանություն», «բռնագաղթ».- Հ. Գ.), բայց եթե վերցնենք այն ժամանակվա ազգաբնակչության հարաբերակցությունը, ապա դա ակնհայտ կլինի»[3]:

Այստեղ, թուրք ազգային մտայնությունն ունի երկու խոց, թմբկահարվող թուրքական ռազմավարական իմաստությունը՝ երկու հիմնական ճաք, քանզի՝ ա) ժամանակակից թուրք ազգային պետությունը ներկայացվում է որպես քաղաքակրթական բարիք (երևի հույների և հայերի համար) և դա ժողովրդավար բազմազգ և բազմամշակույթ Եվրամիության ֆոնի վրա, մերօրյա Թուրքիայում 40-50% էթնիկ թուրքերի և շուրջ 20% ոչ թյուրք ժողովուրդների առկայության պայմաններում[4], բ) քրդական կնճռի անտեսումը, այն իրողության շրջանցումը, որ Մեծ ոճիրից խոշոր հաշվով, ի վերջո, շահեց միայն և բացառապես թուրքերի կողմից արհամարհված նոմադ քրդու-

THE PROPOSED BOUNDARIES OF "WILSONIAN ARMENIA"


Գրիգոր Զոհրապ

թյունը, որի ինքնագիտակցության ներքին շերտերում գերակշռում է ռասայական ու ազգագրական ենթաշերտը՝ կրոնական ինքնության հանդեպ: Եվ որպես արդյունք, թուրք «հեռատես» սուլթաններն ու ազգայիններն իրենց ճակատին դաջելով դահճի և «ցեղասպան» առաջամարտիկի մակդիրը, Հայաստանն «ազատագրեցին» անդրենածին մշակութաստեղծ, Թուրքիան եվրոպականացնող ժողովրդից «ուրիշի ձեռքին կույր գործիք դարձած» նույն նոմադ քրդության համար, ոճիրների մեջ թաղված երկիրը կանգնեցնելով նոր եղեռնագործության՝ *քրդոցիդի* (քրդասպանության) հարկադրանքի կամ թուրքական պետության նոր անդամահատման և Արևմտյան Հայաստանում քրդական ազգային պետության հիմնադրման անխուսափելի ու «պատմական» հեռանկարի առաջ:

Իրոք, անիմանալի են պատմության տարիմաստությունները:

...Սակայն, այդուհանդերձ, չի փոխվում թուրք ազգային մտայնությունը: Նշանակում է, անփոփոխ է մնում և հայոց ազգային գերխնդիրը, *XX դարի Մեծ ոճիրի հետևանքների հաղթահարման համազգային ճիգը*, այն է՝ հասնել արևմտահայության ժառանգների *հայրենադարձության* իրավունքի ճանաչմանը իր հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի հանդեպ, առաջին հերթին, բնականաբար, Թուրքիայի կողմից, նրանց քաղաքացիության շնորհման, հայրենի երկրում բնակվելու թույլտվության և անվտանգության երաշխիքների տրամադրման, նյութական փոխհատուցման տեսքով, հայոց մշակութային-քաղաքակրթական ժառանգության մնացորդացի պահպանության հանձնառության տեսքով և այլն: Հումանիզմի (մարդասիրության) և մարդու բնական իրավունքներից բխող այս քայլերն են, որ կցուցադրեն «ժողովրդավար» և «քաղաքակիրթ» Թուրքիայի արժեքային համակարգի ներքին ծալքերը, աշխարհասփյուռ հայությանը կտրամադրեն Թուրքիայի հետ հաշտեցման, հայրենադարձված անդրենածին ժողովրդին՝ օրինապահ քաղաքացու կարգավիճակ և այլն:

Մնացածը թուրքական նեյնիմների և արևելյան մուղամների շարքից է...

Մինչդեռ, Արևմտյան Հայաստանի հայության իրավատիրությունը հաստատվում է երկկողմ և բազմակողմ պայմանագրերի ամբողջական փաթեթով՝

1. «Հայկական բարեփոխումների» թուրք-ռուսական 1914 թվականի հունվարի 26/ փետրվարի 8-ի համաձայնություն կամ Հունվարի 26-ի ակտ,

2. «Թուրքաց» Հայաստանի մասին Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի 1917 թվականի դեկտեմբերի 29-ի դեկրետ,

3. Սևրի 1920 թվականի օգոստոսի 10-ի դաշնագիր և ԱՄՆ-ի 28-րդ նախագահ Վուդրո Թոմաս Վիլսոնի 1920 թվականի նոյեմբերի 22-ի *իրավարար վճիռ* («arbitral award»),

4. «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» Եվրախորհրդարանի 1987 թվականի հունիսի 18-ի բանաձև,

5. Անտանտի տերությունների՝ Անգլիա, Ռուսաստան, Ֆրանսիա, համատեղ հռչակագիր:

Այսպես, Հունվարի 26-ի ակտով Հայաստանի արևմտյան (թուրքական) մասը (Էրզրումի, Տրապիզոնի, Սվազի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի նահանգներ)՝ այսպես կոչված Արևելյան Անատոլիան, բաժանվում էր երկու հատվածների՝ եվրոպացիների և Բարձր դռան կողմից ընտրված երկու օտար գլխավոր տեսուչներով: Օսմանյան կայսրության մեծ վեզիր և արտգործնախարար Սայիդ Հալիմ փաշայի և Կ. Պոլսում Ռուսաստանի կայսերական հավատարմատար Կ. Գուլկևիչի կողմից ստորագրված բարեփոխումների ծրագրի իրականացման համար գլխավոր տեսուչները պետք է, ինչպես գրում է հիմնախնդրին քաջատեղյակ գերմանացի պատմաբան Կուրտ Ցիմկեն, «վերահսկեին վարչու-

Վարդգես

թյունը, արդարադատությունը, ոստիկանությունը, ժանդարմերիան, ինչպես նաև առանձին վալիների (գեներալ-նահանգապետների.- Լ. Շ.) գործավարությունը: Նրանք էին նշանակում ստորին պաշտոնյաներին և առաջարկում Բարձր դռանը նշանակել բարձր պաշտոնյաներին: Նրանք կարող էին նմանապես պաշտոնազրկել բոլոր պաշտոնյաներին, իսկ վալիներին պաշտոնազրկելու առաջարկությունը նրանք պետք է ներկայացնեին Բարձր դռանը: Ապահովվում էր ազգաբնակչության առանձին շերտերի համամասնական ներկայացուցչությունը վիլայեթների գլխավոր խորհուրդներում, այնպես որ Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների գլխավոր խորհուրդները կիսով չափ բաղկացած պիտի լինեին քրիստոնյա ներկայացուցիչներից»: Զուգահեռաբար, Բարձր դռան կողմից, զորեղ դաշնակցի՝ Գերմանիայի խոժոռ հայացքի ուղեկցությամբ ընդունվում էր Հայկական հարցի հրատապությունը, իսկ տարածքի ազգային (էթնիկական) պատկանելիության իրողությունը օժտվում էր այնպիսի զորեղ հատկանիշով և գործառույթով, ինչպիսին բնիկ ժողովրդի լեզվի գործածության ոլորտի ընդլայնման անհրաժեշտության ընդունումն էր: *«Օրենքներն ու հրամանագրերը*,- «վերծանում է» բարեփոխումների իմաստը Կ. Ցիմկեն.- *պետք է գրվեն երկու լեզվով՝ թուրքերեն և հայերեն, դատավճիռները՝ թուրքերեն, հայերեն թարգմանությամբ, երկու լեզվի օգտագործումը դպրոցում և իշխանության մարմիններում երաշխավորվում է»*[5]: Այսպիսով, օսմանյան թուրքերի կողմից Հայաստանի նվաճումից հարյուրավոր տարիներ անց կայսրությունը «Եվրոպական կոնցերտի (համանվագ)» ճնշման ներքո (արևմտյան) Հայաստանում հայոց լեզուն, կամա-ակամա, օժտում էր պետականակիր բաղադրիչով, ինչը թեկուզև եզոպոսյան շարադրանքով, ճանաչում էր (արևմտա)Հայաստանի պատկանելիությունը (արևմտա)հայությանը: Ավելի լայն կոնտեքստով, ըստ էության, տվյալ բարեփոխումների անհրաժեշտության ընդունումով և օսմանահպատակ հայության՝ Օսմանյան *խորհրդարանում* քաղաքական ներկայացվածության (Գր. Զոհրապ, Վարդգես և ուրիշ երեսփոխաններ), պետական *վարչամեքենայում*, տնտեսական-մշակութային կյանքում և այլուր անխտիր առկայության պայմաններում (թուրքա)հայությունն առհասարակ վերածվում էր կայսրության *պետականակիր երկրորդ ազգի*:

Ուրեմն Մաքիավելի պետք չէ լինել գլխի ընկնելու համար, որ օսմանյան վերնախավը մի կողմից «ազնվազարմ» ձեռագրով (Սայիդ Հալիմը ազնվական է՝ պրինց) ճանաչելով՝ աշխարհագրությամբ և կայսրության ահռելի երկրամասի դատական և վարչական համակարգում թուրքերենին առընթեր հայոց լեզվի ներդրումով հայոց հայրենատիրությունը սեփական հայրենիքի հանդեպ, մյուս կողմից՝ ենիչերիի բնազդով կայսրությունը մղում է պատերազմի հնոց, այնտեղ Արևմտյան Հայաստանը բոցավառելու և կայսրության ոչ թյուրք ժողովուրդներից մեկը հիմնովին բնաջնջելու համար:

Ուրեմն, 1915 թվականը թուրք վերնախավի *պետական* հանցագործության տարեթիվն է, շարունակությունը հայության և Հայաստանի հանդեպ ավանդական թուրքական քաղաքականության, ուղղակի և իրական պատասխանը «Հայկական բարեփոխումների» թուրք-ռուսական համաձայնագրին, *բայց և ճանաչումը* (լեմայի օրենքով) *Արևմտահայաստանի հանդեպ (արևմտա)հայության ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ*:

Իր տեսակի մեջ, անշուշտ, եզակի իրավաքաղաքական նշանակության փաստաթուղթ է ցայսօր անտեսված Անտանտի տերությունների՝ Անգլիա, Ռուսաստան, Ֆրանսիա, 1915 թվականի մայիսի 24-ի համատեղ հռչակագիրը, որտեղ նրանց կողմից թուրքական Մեծ ոճիրը, ապրիլի 24-ից ուղիղ մեկ ամիս հետո, որակվում է որպես *«մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված<...> նոր հանցագործություններ»*, ասել է թե ցեղասպանություն, որն իրականացվում է «օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ աջակցությամբ» Հայկական լեռնաշխարհի

Վեջդի Գյոնուլ

թափանցած «քուրդ և թուրք» բնակչության կողմից *աբորիգեն* (նախաբնիկ) ժողովրդի հանդեպ իր բնօրրանում՝ Հայաստանում և «համայն Կիլիկիայում»: Հռչակագիրն ասում է. «Գրեթե մեկ ամսից ի վեր *Հայաստանի քուրդ և թուրք բնակչությունը հայերին կոտորելու* հարցում գործում է օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ աջակցությամբ: Այդպիսի կոտորածներ տեղի են ունեցել ն. տ. ապրիլի կեսերին (Ա.Հ.-ի տեղանունների թվարկում.- Լ. Շ.) և համայն *Կիլիկիայում*: ...Միաժամանակ *Կ. Պոլսում* օսմանյան կառավարությունը դաժանորեն է վարվում անպաշտպան *հայ բնակչության* հանդեպ»[6] :

Եզակի է Խորհրդային պետության առաջին ծրագրային հրովարտակներից «Թուրքաց» Հայաստանի մասին դեկրետը, որով տալով Արևմտյան («Թուրքաց») Հայաստանի հարցի քաղաքական և իրավական գնահատականը, դեկրետը հռչակեց Արևմտյան Հայաստանի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ սեփական անկախ պետության ստեղծումը, դրանով իսկ հաստատելով (արևմտա)հայության հայրենատիրության բացարձակ իրավատիրությունը իր բնօրրանի՝ Արևմտյան Հայաստանի հանդեպ:

Հարցադրման շրջանակներում, անկասկած, սույն դեկրետը օրգանական շարունակությունն է ու զարգացումը Հունվարի 26-ի ակտի և Անտանտի տերությունների համատեղ հռչակագրի, քանզի Թուրքիան ցեղասպանության ոճիրով իրեն դուրս դրեց բարոյականության և իրավունքի քաղաքակիրթ ընկալումների բանական շրջանակներից:

Ցեղասպանության ակտով Թուրքիան ժխտեց գերիշխանության (սուվերենիտետի) բարոյական, քաղաքական և իրավական հիմքերը արևմտահայության հայրենիքի հանդեպ, հաստատեց արևմտահայության հայրենատիրությունը, ինչից էլ հանդես է գալիս Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը:

Բոլշևիկները դեկրետի մշակմանը «կպել» էին հիմնավորապես: Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի ստեղծած պետական հանձնաժողովը կազմել էր մի մանրակրկիտ զեկուցագիր, որը ոչ միայն դեկրետի էթնոպատմական պատվանդանն էր աներեր դարձնում, այլև անքննելի փաստարկներով էր օժտում հայոց հայրենատիրության իրավունքը և շարունակում պահպանել իր հրատապությունը անժամկետ: Զեկուցագիրն ասում է. «Հայերը, որոնք իրենց հայրենի երկրում՝ Հայաստանում, դեռևս XVII հարյուրամյակում կազմում էին բնակչության 98%-ը մահմեդական բնակչության 2%-ի առկայությամբ, 1914 թվականին արդեն կազմում էին Հայաստանի բնակչության 42%-ը: Մնացած 58%-ը հույներ էին, քրդեր, եզիդներ, ղզլբաշներ և թուրքեր, ընդսմին բոլոր մահմեդականները միասին կազմում էին Հայաստանի բնակչության ընդամենը 38%-ը: Սակայն, այնուամենայնիվ, պատերազմը սկսվելուց առաջ հայերը կազմում էին ամենաբազմաքանակ ազգային խումբը Հայաստանում»[7]:

Ընդ որում, Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ճանաչում էր հայ ժողովրդի պատմական իրավունքը իր հայրենիքի հանդեպ, հռչակում էր արտամղված հայության՝ հայրենիք վերադառնալու անբեկանելի իրավունքը, «Թուրքաց» Հայաստանի անկախության իրավունքը պատմական առանձնահատուկ պայմաններում. ա) Թուրքիան ցեղասպանության հետևանքով չուներ այլևս Հայաստանի հանդեպ, ինչպես ասվել է, գերիշխանության որևէ հիմք, բ) Արևմտյան Հայաստանը դուրս էր դեկրետի հռչակման պահին Թուրքիայի իրավասությունից, թուրքական որևէ վերահսկողությունից:

«*Պատմական Հայաստանի գաղափարը*,- գրում է ակադեմիկոս Հր. Սիմոնյանը,- *որը գրավված էր ռուսական զորքերի [և հայ կամավորական գնդերի.- Լ. Շ.] կողմից պատերազմի ընթացքում, վերադարձվում էր հայ ժողովրդին: Հենց դրա մեջ է «Թուրքաց» Հայաստանի մասին դեկրետի պատմական նշանակությունը*»[8]: Ժողկոմխորհը դեկրետը հրապարակեց նրա ընդունումից երկու օր անց, 1917 թվականի դեկտեմբերի 31-ին, իսկ Խորհրդային Ռուսաստանի պետական իշխանության ներկայացուցչական մարմինը՝ Խորհուրդների III համառուսաստանյան համագումարը

1918 թվականի հունվարի 15 (28)-ին հաստատեց ՌԽՍՀ Ժողկոմխորհի դեկրետը Արևմտյան Հայաստանի մասին, բարձրագույն օրենքի ուժով անշրջելի դարձնելով Ռուսաստանի տեսակետը Արևմտյան Հայաստանի ավտոխտոն (բնիկ, անդրենածին) ժողովրդի իրավատիրության վերաբերյալ: Դեկրետն օժտվեց լեգիտիմության բացարձակ աստիճանով:

Իրավաքաղաքական իմաստով Ռուսաստանը ուղղակի անցում էր կատարում Արևմտյան Հայաստանի բարենորոգումների անհրաժեշտության գիտակցումից (1914 թ.) դեպի լիակատար անկախություն ճանաչում (1917 թ.): Միջազգային իրավունքի շրջանակներում կատարված ակտը անխոցելի է և անժամկետ:

Եվ անկախ այն բանից, թե ով է ստորագրել «Թուրքաց» Հայաստանի մասին դեկրետը, 1912 թ. սեպտեմբերից իտալա-թուրքական պատերազմի ընթացքում, ըստ էության, թուրքասեր տեսակետ[9] որդեգրած համաշխարհային հեղափոխության մոլագար առաջնորդ, բյուզանդական քաղաքակրթության և ռուսաստանյան պետականության գերեզմանափոր Վոլոդյա Ուլյանով Լե-նի՞նը, թե՞ վրացի նացիոնալ-բոլշևիկ Սոսո Ջուղաշվիլի-Ստալինը, դեկրետն ունի օրենքի անսպառ լիցք ինչպես անցյալի, այնպես էլ ապագայի համար:

Որպես իրավաքաղաքական վավերագիր այն կատարյալ է:

Թերևս սխալված չենք լինի, եթե նկատենք, որ Անտանտի տերությունների 1915 թվականի մայիս 24-ի հռչակագիրը պատմական իր ժառանգորդումը, իրավաքաղաքական իր զարգացումն ունեցավ խառնակ ժամանակների հարափոփոխ գործոնների պարտադրանքով, առաջին հերթին Սևրի դաշնագրի Հայաստանին, քաղաքացիությանը, փոքրամասնությունների պաշտպանությանը, լքված սեփականությանը (Emval-i-Metpune') վերաբերող և հայ ժողովրդի այլ շահերը շոշափող հոդվածներով (հոդվ. 88-93, 125, 142, 144), Վ. Վիլսոնի իրավարար վճռում[10]:

Քանզի, հիշյալ վավերագրերը, որոնք աներկբայորեն հաստատում են արևմտահայության իրավատիրությունը Արևմտյան Հայաստանի հանդեպ, հանդես են գալիս երկու իրավաքաղաքական պոստուլատներից.

ա) թուրքական ցեղասպան պետության քաղաքական պատասխանատվությունից,

բ) թուրքերի՝ հպատակ ժողովուրդներին կառավարելու անկարողությունից:

Ամերիկյան (իրավարար) կողմը Նախագահի վճռի պարագայում հանդես էր գալիս այն անաչառ դիրքորոշումից, թե «քանի որ դա (իրավարար վճիռը.- Լ. Ծ.) վերաբերում է Ամերիկային և դաշնակիցներին, հրաժարումը կամ Սևրի դաշնագիրը անվավեր դարձնելը չի կարող ներգործել Վիլսոնի իրավարարական վճռի վրա, քանզի Նախագահի վճիռը հենվում է ոչ թե 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագրի վրա, այլ Դաշնակիցների Գերագույն խորհրդի 1920 թվականի ապրիլի 26-ի [Սան-Ռեմոյի խորհրդաժողովի.- Լ. Ծ.] հրավերի: Խորհրդի հրավերը և Սևրի դաշնագիրը կապված չեն մեկը մյուսի հետ և անկախ են մեկը մյուսից: Նախագահին [ուղղված] հրավերում ոչ մի պայման չի առաջադրված»[11]:

Արևմտահայության հայրենատիրության փաստարկներին որոշակի իրավական և քաղաքական կշիռ է հաղորդում Եվրախորհրդարանի «*Հայկական հարցի քաղաքական լուծման մասին*» 1987 թվականի հունիսի 18-ի բանաձևը («European Parliament. Doc. A2-33/87»), գրված եվրոպական իրավունքի բանական էության, բայց և եվրոպական դիվանագիտության անհետևողականության, եթե կուզեք՝ խարդավանքների ավանդույթով, ստեղծում է հիմնախնդրի երկատվածություն, մի դեպքում (Հոդված 1) հստակ և աներկբայորեն իրարից բաժանելով Հայկական հարցն ու փոքրամասնությունների հարցը Թուրքիայում, մյուս դեպքում (Հոդված 6)՝ ըստ էության խեղաթյուրելով իրեն քաջածանոթ Հայկական հարցի իրական բովանդակությունը, անտեսելով

Անտանտի տերությունների համատեղ հռչակագրի ոգին, հայկական քաղաքակրթական ինքնությունը (Հոդված 8) Արևմտյան Հայաստանում տարրալուծելով «ներկա Թուրքիայի տարածքում դարերի ընթացքում զարգացած» ինչ-որ ամորֆ, «ավելի ընդհանրական քաղաքակրթության մեջ»: Այդ բանաձևը Հայկական հարցը հանգեցնում է ցեղասպանության ճանաչման ակտի շքահանդեսի, զոհի և դահճի գրկախառնության, «հայ փոքրամասնության» (Հոդված 6) և «ոչ իսլամ փոքրամասնությունների պաշտպանության» 1923 թվականի Լոզանի դաշնագրի համապատասխան հոդվածների տրամադրություններին և այլն:

Փարիզի խաղաղության վեհաժողովի օրերին, երբ քաղաքականացված և բարոյական մարդկությունը սպասում էր առաջին աշխարհամարտի *Արդարահատույցին՝* Օսմանյան ճիվաղի դարերի ընթացքում վաստակած պատժին, Անգլիայի հանրաճանաչ լորդը՝ Ռոբերտ *Սեսիլն* ասում էր, որ թուրքերին չպետք է թույլ տալ իրենց չարագործություններով կրճատել հայերի տարածքները, «*անել դա, կնշանակեր [նրան] մրցանակ տալ կոտորածների համար*»: Նույն միտքն էր հայտնում ոչ անհայտ Է. *Կռոուն* (Sir Eyre Crowe). «*Հայկական հարցը դիտարկելը և լուծելը սոսկ հայերի այժմյան թվաքանակով,*- զգուշացնում էր նա,- *կլիներ, իհարկե, հավասարազոր հաստատմանն ու խրախուսմանը անցյալում թուրքերի՝ իրենց հպատակ ժողովուրդների խնդրի լուծման հանդեպ գործադրած մեթոդի*» (1919թ.,1-ը դեկտեմբերի):

Ի վերջո, և՛ Արևմուտքը, և՛ Արևելքը գնացին հենց թուրքերին «կոտորածների համար մրցանակ» շնորհելու ճանապարհով, դրանով իսկ լայն դուռ բաց թողնելով աշխարհում անվերջ էթնիկական զտումների և ցեղասպանությունների հետագա շղթայի համար: Վերջերս էլ, իբրև թե Արցախի հիմնախնդիրը լավ չպատկերացնելու պատճառով, ուրացողների, պատմության թյուրքական մեկնիչների, չպատժվող զանգվածային մարդասպանությունների անգերազանց վարպետների ցանկում տեղավորելով Ադրբեջանի թուրքերին:

Իսկ հայ ժողովուրդը, ի մասնավորի՝ Արևմտյան Հայաստանի հայությունը, *Հայրենատիրության* և *Հայրենակցի* իր խաչը կտանի առաջ, զորավիգ ունենալով 20-րդ դարի իդեալիստի՝ Վուդրո Թոմաս Վիլսոնի լավատեսությունը. «*Վաղ թե ուշ Թուրքիան կկանգնի տրիբունալի* (արտակարգ դատարան.- Լ. Շ.) *առաջ և հաշիվ կտա, և այն ժամանակ նրանից կպահանջեն թալանածը վերադարձնել իր իսկական տիրոջը*»:

* * *

Ինքնին հասկանալի է, որ այնպիսի կնճիռ, ինչպիսին Հայրենատիրության գոտեմարտն է, այն էլ «Հայկական հարց» ենթատեքստով, հուշում է. այստեղ պատրանքներն անհիմն են նույնչափ, որքանով էլ վտանգավոր: Քանզի հարցադրումը ենթադրում է. ա) համազգային քաղաքական անկոտրում *կամք* և բ) կազմակերպական կարողությունների *գերագույն* մոբիլիզացիա և լարում:

1. *Խուրշուդյան Լ. Ա.*, Հայոց ազգային գաղափարախոսություն, Եր., 1999, էջ 281:
2. Տե՛ս *Մեծ տերությունները*, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. I, աշխատասիրությամբ Ա. Պեյլերյանի, թարգմ. ֆր., Եր., 2005, էջ 63-64:
3. Տե՛ս *Գևորգյան Հ. Ա.*, Հայաստան և Եվրոպա. Հայաստանի պատմությունը և հայկական մշակույթը ժամանակակից պատմագիտական և քաղաքագիտական տեսությունների լույսի տակ.- «ՎԷՄ», 2009, № 1, էջ 45:
4. Տե՛ս *Дергачев В. А.*, Геополитика, Киев, 2000, էջ 259:
5. *Ziemke K.*, Die neue Turkei, Berlin, 1930, S.270.- Տե՛ս *Օհանջանյան Ա.*, 1915 թվական: Անհերքելի վկայություններ. Ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, թարգմ. գերմ., Եր., 1997, էջ 62:
6. Տե՛ս *Մեծ տերությունները*, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), էջ 99:
7. *Терян В.*, Докладная записка о Турецкой Армении.- Տերյան Վ., Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1925, էջ 318:
8. *Симонян Р. Г.*, Армянский вопрос и ленинский декрет «О «Турецкой» Армении» - Национальный вопрос и новое мышление. Редкол: Абрамян Л. А. и др. Ер., 1989, էջ 278:
9. Տե՛ս *Улунян А. А,*. Коминтерн и геополитика: Балканский рубеж, 1919-1938, М., 1997, էջ 27:
10. Հանգամանորեն տե՛ս *Геноцид армян:* ответственность Турции и объязательства мирового сообщества. Документы и комментарий. (Ком.: проф. Ю. Г. Барсегова). В 2-х т., т. 2, ч. 2. М., 2005, էջ 230-251, *Շիրինյան Լ.Ղ.*, Արևմուտքի անկումը. Վուդրո Վիլսոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման ամերիկյան փորձի ձախողումը, Եր., 2010, *Պապյան Ա.*, Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները, Եր., 2007, էջ 5-8, 13-16, 32-39, 96-117:
11. *Gerard, James W.*, Armenia, Russia and the Lausanne Treaty.- The Lausanne: Turkey and Armenia, N.Y., 1926, էջ 166:

ՀՀ Ազգային ժողովի ՀՅԴ պատգամավորական խմբակցությունը հանդես է եկել «Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի գործունեության ուսումնասիրության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին» նախաձեռնությամբ: Ստորև տպագրում ենք որոշման հիմնավորումը և բուն որոշման նախագիծը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 73-րդ հոդվածի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Ստեղծել ժամանակավոր հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հայաստանի Հանրապետությունում գազամատակարարման համակարգի գործունեության ուսումնասիրության վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություն ներկայացնելու համար:

2. Հանձնաժողովի խնդիրն է՝

ա) վերլուծել Հայաստանի Հանրապետությունում գազամատակարարման համակարգի գործունեության և բնագավառի պետական կարգավորման, ինչպես նաև միջազգային փորձը և ներկա զարգացումների արդի վիճակը,

բ) գնահատել գազամատակարարման գործող համակարգի սոցիալական, տնտեսական, իրավական և բնագավառի պետական կարգավորման համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31.1 և 33.1 հոդվածների, դրանց հիման վրա ընդունված ոլորտի օրենսդրական պահանջներին,

գ) գնահատել բնագավառում ստեղծված իրավիճակի ազդեցությունը Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման հեռանկարների վրա,

դ) ներկայացնել գազամատակարարման և բնագավառի պետական կարգավորման համակարգերի բարելավման և բարեփոխման առաջարկություններ:

3. Եզրակացության առնչությամբ առարկություններ ունեցող անդամները (այդ թվում՝ խորհրդակցական ձայնի իրավունքով) կարող են ներկայացնել հատուկ կարծիք, որը կցվում է եզրակացությանը:

4. Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրներն իրականաց-

նելիս իրավունք ունի

ա) հարցումներով դիմելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնք հնարավորինս սեղմ, բայց ոչ ուշ, քան օրենքով սահմանված ժամկետներում պետք է տրամադրեն անհրաժեշտ տեղեկություններ,

բ) Հանձնաժողովի որոշմամբ հրավիրելու պաշտոնական անձանց՝ նրանցից պարզաբանումներ ստանալու Հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ,

գ) իր աշխատանքներում ներգրավելու համապատասխան մասնագետների և փորձագետների, այդ թվում՝ միջազգային:

5. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են երկուական պատգամավոր Ազգային ժողովի խմբակցություններից, և մեկ՝ դրանց կազմում չընդգրկված պատգամավորներից: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ և տեղակալ:

6. Ձևավորվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովը իր աշխատանքներին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցելու հրավեր է ուղարկում սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև գազամատակարարման համակարգում գործող կազմակերպություններին, որոնց ցանկը որոշում է Հանձնաժողովը: Հանձնաժողովի նիստերին մասնակցում է նրանցից յուրաքանչյուրի մեկական ներկայացուցիչ:

7. Պատգամավորները Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համապատասխան խմբակցության ղեկավարի (քարտուղարի) ներկայացմամբ:

8. Հանձնաժողովի կազմում ընդգրկելու համար խմբակցության կազմում չընդգրկված պատգամավորների թեկնածուներին Ազգային ժողովի նիստում առաջարկում են պատգամավորները: Ընտրված է համարվում այն պատգամավորը, որը բաց քվեարկությամբ ստանում է առավել թվով ձայներ:

9. Ազգային ժողովի աշխատակազմը Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համար սահմանված կարգով ապահովում է Հանձնաժողովի գործունեության համար օրենքով սահմանված անհրաժեշտ պայմաններ:

10. Հանձնաժողովի գործունեության ժամկետը վեց ամիս է:

ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ակնհայտ է, որ հանրապետության գազամատակարարման համակարգի զարգացումն իր էական ազդեցությունն է ունեցել երկրում ձևավորված ծանր սոցիալ-տնտեսական վիճակի որոշակի թեթևացման գործում, ինչի մեջ անշուշտ իր դրական դերակատարումն ունի թե «Հայռուսգազարդ» ընկերությունը և թե հատկապես ոլորտի պրոֆեսիոնալ մենեջմենթը:

Գազի բնագավառը Հանրապետության գրեթե բոլոր ապրանքատեսակների և ծառայությունների գծով գնագոյացման համակարգի եթե ոչ հիմնական, ապա առնվազն էական բաղադրիչն է:

Այս ոլորտի մեկ այլ կարևոր ձեռքբերում է Հանրապետության բարձր ատիճան կազմող գազաֆիկացումը (հնարավոր բաժանորդների շուրջ 86%-ը օգտվում է գազից):

Թեև ընդունված է նշել, որ գազաֆիկացումը թանկ հաճույք է, սակայն այս պայմաններում համակարգում տեղի ունեցող փոփոխությունները և հատկապես սակագների վերանայումը օբյեկտիվորեն առաջ է բերում հանրային լայն արձագանք՝ առաջադրելով սոցիալական, տնտեսական, բնապահպանական և երկրի կայուն զարգացման բազմաբնույթ հարցադրումներ:

Այլ կերպ ասած՝ համակարգը ինքնին զուտ սոցիալ-տնտեսական գործոնից վերածվել է Հանրապետության կայուն զարգացման անվտանգության բաղադրիչի:

Հետևաբար այս ամենը ձևավորում է գազամատակարարման համակարգի նկատմամբ նոր պահանջներ, որտեղ էական է համարվում պետության վարվող և ապագայում նախատեսվող քաղաքականությունը:

Նախագծով առաջարկվող խնդիրների ուսումնասիրման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ՀՅԴ պատգամավորական խմբակցության 2010 թ. ապրիլի 8-ին ՀՀ կառավարությանն ուղղած 11 ենթահարցերից բաղկացած գրավոր հարցադրման վերաբերյալ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կողմից 17.05.2010 թ. թիվ 01/12.2/1196-

10 գրությամբ ներկայացված պատասխանով, այնպես էլ գազամատակարարման համակարգում ձևավորված արտաքին և ներքին նոր մարտահրավերները ժամանակին բացահայտելու և դրանց դիմագրավելու գործում օրենսդիր մարմնի մասնակցությամբ:

Գրավոր հարցադրմամբ նախ փորձ էր արվել կառավարությունից ստանալ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ից առանձին դուստր «Տրանսգազ» ՍՊԸ-ի ստեղծման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորում, ինչպես նաև տեղեկություններ՝ դրա գործունեության արդյունքների, ֆինանսական ցուցանիշների, թափանցիկ գործունեության գործող մեխանիզմների և պետական հսկողության համակարգի վերաբերյալ:

Երկրորդ, փորձ էր արվել ստանալ հիմնավորում նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ խոշոր սպառողներին վաճառվելիք բնական գազի ծավալի փոքրացման վերաբերյալ, ինչը ինքնին սակագնի բարձրացմանը նպաստող գործոն է և Հայաստանի սոցիալ-տնտեսության վիճակը բնութագրող ցուցիչ: 2009 թվականին 2008 թվականի համեմատությամբ հանրապետությունում գազի մատակարարման ծավալի նվազումը մոտ 20%-ով (2010 թ. 2008 թ.-ի համեմատ կանխատեսվում է 27%), իսկ գազի խոշոր սպառողներից հատկապես էներգետիկայում արձանագրված 40%, արդյունաբերությունում՝ 30%, ԱԳԼՃԿ-ներում՝ 11,2% գազի սպառման ծավալների անկումը, վկայում են այն մասին, որ Հայաստանի գազամատակարարման համակարգի առջև ծառացել են մարտահրավերներ, որոնց ժամանակին բացահայտումն ու չեզոքացումը պահանջում են համակարգային լուծումներ: Հարցադրմամբ փորձ էր արվել ստանալ տեղեկատվություն հանրապետություն մտնող և իրացվող գազի ծավալների, գազի որակական հատկանիշների վերահսկման հարցում պետության կողմից կիրառվող սխեմաների և մեխանիզմների մասին: Բնական է, որ այդպիսի սխեմաների և մեխանիզմների բացակայության դեպքում առկա է գազի սվերային հոսքերի ռիսկ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը սեփականության իրավունքով տիրապետում է «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի 20 տոկոսին, հարցադրումը ներառում էր նաև տեղեկատվության ստացման հնարավորություն՝ ընկերության կորպորատիվ կառավարմանն առնչվող մի քանի հիմնահարցերի վերաբերյալ: Մասնավորապես, հարցադրման շրջանակներում ակնկալվում էր ստանալ ընկերության ֆինանսական աուդիտին, նրա կողմից կնքված վարկային պայմանագրերին, խոշոր և/կամ շահագրգռվածությամբ գործարքներին, ինչպես նաև կանոնադրական կապիտալի փոփոխություններին և վճարված շահութաբաժիններին (ներառյալ Հայաստանի պետական բյուջե փոխանցված) վերաբերող հարցերի պատասխանները:

Հարցերի մի մեծ խումբ կազմված էր ավտոգազալիցքավորման ճնշակայանների խնդրի հետ: Մասնավորապես, ակնկալվում էր պատասխաններ ստանալ ԱԳԼՃԿ-ների կողմից գազի վաճառքի առաջադիմական եղանակների, ԱԳԼՃԿ-ների նկատմամբ կիրառվող հարկային քաղաքականության, այդ ոլորտում գոյություն ունեցող սվերի ծավալների և մրցակցային իրավիճակի, ինչպես նաև ոլորտում գործող փոքր ու միջին ձեռնարկություններին պետական աջակցության քաղաքականության վերաբերյալ:

Հարցերի մեկ այլ խումբ կազմված էր սպառողների սպասարկման, գազային հաշվիչների ճշտության և նրանց մատակարարվող գազի որակի հետ: Գաղտնիք չէ, որ այստեղ առկա է թե սպառողների իրավունքների և թե նաև անվտանգության խնդիր:

Եվ վերջապես, հարցադրումը նպատակ ուներ կառավարությունից ստանալ բացատրություն այն մասին, թե 2010 թ. ապրիլի 1-ից բարձրացված սակագնի դիմաց բնակչությանը տրվող փոխհատուցման հաշվարկների հիմքում ի՞նչ գործոններ են դրված: Այդ առումով ակնկալվում էր ստանալ վերլուծություններ և հաշվարկների մանրամասնություններ: Բացի այդ, ակնկալվում էր ստանալ պատասխաններ հետևյալ հարցերի վերաբերյալ. նախատեսվում են արդո՞ք գազի զգալի սպառում ունեցող փոքր ու միջին բիզնեսին աջակցության մեխանիզմներ, ինչպիսի՞ գործողություններ են նախատեսվում գազի սակագնի բարձրացման հետևանքով այլ ապրանքատեսակների և ծառայությունների գների աճի զսպման, ինչպես նաև բնակչության կենսամակարդակի անկումը կանխելու ուղղությամբ:

Այլ կերպ. հարցադնման բուն նպատակը Հայաստանի սոցիալ-տնտեսական համակարգի գործունեության արդյունավետության և անվտանգության աստիճանի բարձրացումն է, հանրության և պետության շահերի պաշտպանության հիմնախնդիրների բացահայտումն ու այդ ուղղությամբ համակարգված քաղաքականության իրականացումը:

Սրա հիմքը նախ և առաջ ՀՀ Սահմանադրության պահանջներն են:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 31.1 հոդվածը սահմանում է. պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ:

Սահմանադրության 33.1 հոդվածի 3-րդ մասի համաձայն ձեռնարկատիրության ոլորտում մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար:

Հատկանշական է, որ բնագավառում առկա հիմնախնդիրները ՀՀ անվտանգության ռազմավարությունում դիտվում են որպես Հայաստանի անվտանգության ներքին սպառնալիք:

Սակայն, ընդհանրացնելով կառավարության տված պատասխանները, հարկ է եզրակացնել, որ առանձին բացառություններով՝ դրանք կամ լիարժեք չէին, կամ առաջացնում էին նոր հարցադրումներ, որոնք կարիք ունեն ամբողջական դիտարկման:

Կառավարության կողմից ներկայացված պատասխաններում

1. բացակայում է կամ առնվազն ներկայացված չէ Հայաստանի Հանրապետության կողմից գազամատակարարման ոլորտում իրականացվող գազի որակի և քանակի նկատմամբ վերահսկողությունը ոչ պետական և ոչ էլ հասարակական մակարդակներով,

2. լիարժեքորեն բացահայտված չեն գազամատակարարման համակարգի թափանցիկ գործունեության ամբողջական սխեմաները,

3. ներկայացված չեն համակարգի առկա իրավիճակը, հիմնախնդիրները, ինչպես նաև զարգացման տեսլականը,

4. բացահայտված չէ գազամատակարարման համակարգի գործունեության ազդեցությունը ինչպես միջանկյալ, այնպես էլ վերջնական սպառողների վրա: Խոսքն առավելապես կիրառվող սակագնային քաղաքականության և դրա հետևանքների մասին է:

Մեր կարծիքով, գազամատակարարման համակարգի աշխատանքի նկատմամբ ուշադրությունը առաջիկա տարիներին կմեծանա, ինչը կապված է նաև 2005-2006 թթ. սկսած ռուսական «Գազպրոմ» ընկերության կորպորատիվ և առևտրային ռազմավարության հստակեցումների հետ: Իսկ «Գազպրոմը» մենաշնորհային դիրք ունի Հայաստանի բնական գազի մատակարարման ոլորտում:

2005-2006 թթ. «Գազպրոմը» կտրուկ բարձրացրեց բնական գազի մատակարարման գները ԱՊՀ երկրների համար: Դրա հետ կապված մասնագետների մի մասն հակված է կարծելու, որ «Գազպրոմը» պարզապես գործիք է քաղաքական խաղում, իսկ մի մասն էլ համոզված է, թե այդ գործողությունները բացատրվում են տնտեսական նպատակահարմարությամբ: Իհարկե, «Գազպրոմի» գնային քաղաքականությունը ունի քաղաքական ենթատեքստ, թեկուզև այն պատճառով, որ ԱՊՀ երկրներին գազի մատակարարման գինը սահմանվում է միջկառավարական համաձայնագրերի հիման վրա: Բայց գների բարձրացման իրական պատճառը թերևս ավելի շատ կոմերցիոն բնույթ ունի: «Գազպրոմը» ձգտում է ավելացնել իր եկամուտները, ինչում անմիջականորեն շահագրգռված է նաև ռուսական կառավարությունը, քանի որ «Գազպրոմը» երկրի խոշորագույն հարկատուն է:

Ռուսական կառավարության աջակցությամբ «Գազպրոմը» ԱՊՀ երկրներում սկսեց աստիճանաբար անցնել այնպիսի գների օգտագործման, որոնք հիմնվում են եվրոպական net-back-ի վրա: «Գազպրոմը» նախատեսում է այդ գործընթացն ավարտել 2011 թ.: Այդ ռազմավարությունը կոշտ դիմադրության հանդիպեց Ուկրաինայի և Բելառուսի կողմից, որոնք փորձում են տարանցիկ երկրի իրենց կարգավիճակը օգտագործել որպես պաշտպանական գործիք:

Ի պատասխան «Գազպրոմի» կողմից գազի գների բարձրացման, Ադրբեջանը և Վրաստանը պարզապես հրաժարվեցին գազ գնել Ռուսաստանից: Մոլդովան և Հայաստանը համաձայնեցին «Գազպրոմի» պայմաններին: Ընդ որում, հարկ է նշել, որ Հայաստանը և Մոլդովան ԱՊՀ այն բացառիկ երկրներն են, որոնց գազատրանսպորտային համակարգը ամբողջությամբ վերահսկվում է «Գազպրոմի» կողմից:

ԱՊՀ գրեթե բոլոր երկրները ունեն մայրուղային գազամուղներ, որոնցով գազը հանքավայրից մատակարարվում է երրորդ երկրներ: Այդ պատճառով, առանց ԱՊՀ երկրների գազատրանսպորտային համակարգի օգտագործման, «Գազպրոմը» զրկվում է իր արտասահմանյան շուկայի զգալի մասից: ԱՊՀ երկրների այդ տարանցիկ ներուժով էլ բացատրվում է դրանց նկատմամբ «Գազպրոմի» հետաքրքրությունը: Բայց եթե այդ երկրները իրենց տարանցիկ նշանակությունը օգտագործում են «Գազպրոմի» հետ բանակցություններում, նույնը չի կարելի ասել Հայաստանի համար: Հայաստանը նույնիսկ չօգտագործեց Իրան-Հայաստան գազամուղի հետ կապված հնարավորությունները, պարզապես այն հանձնելով «Գազպրոմի» վերահսկողությանը:

Ներկայումս Հայաստանի գազամատակարարման համակարգի գործունեությունը իրականացնում են երկու ընկերություններ՝ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն և «Տրանսգազ» ՍՊԸ-ն (որի 100% բաժնեմասի սեփականատերը «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն է): Առաջինը իրականացնում է բնական գազի ներկրումը, բաշխումը և մատակարարումը, ինչպես նաև համակարգի կառավարումը, իսկ երկրորդը՝ գազի փոխադրումը հանրապետության սահմանից մինչև բաշխող ընկերություն և ստորգետնյա պահեստարանների շահագործումը: Դրա արդյունքում, գործում է գազամատակարարման համակարգի բարդ սակագնային համալիր, առանձին-առանձին են հաշվարկվում համակարգի ընկերությունների տարեկան հասույթների և շահույթների մեծությունները, ինչը, մեր կարծիքով, բացասաբար է անդրադառնում ընկերության թափանցիկության, ներդրումների արդյունավետության և ի վերջո վերջնական սպառողին գազի մատակարարման սակագնի վրա:

2010 թ. ապրիլի 1-ից մինչև բնական գազի սակագինը վերջնական սպառողի համար ավելացվել է մոտ 37,5%-ով, այն դեպքում, երբ հանրապետություն ներկրվող գազի գինը աճել է 17%-ով ($154-ից մինչև $180՝ հազար խորանարդ մետրի համար): Համեմատության համար նշենք, որ 2010 թ. հունվարի 1-ից ռուսական բնական գազի գնման գինը Մոլդովայի համար աճեց հազար խորանարդ մետրի համար $192-ից մինչև $233 (աճը՝ 21,4%): Մոլդովական կարգավորող մարմնի (ANRE) որոշման համաձայն, վերջնական սպառողին բնական գազի մատակարարման սակագինը ավելացվեց ընդամենը 13,9%, մինչև $288՝ հազար խորանարդ մետրի համար: Ընդ որում, ջերմաէլեկտրակայանների համար գազի սակագինը աճել է 10% (մինչև $245,2), բնակչության համար միջինը՝ 16,5% (մինչև $312,4): Կենցաղային սպառողների համար, ամսական մինչև 30 խորանարդ մետր ծավալով, գազի սակագինը կազմում է $290,6՝ հազար խորանարդ մետրի համար, իսկ 30 խորանարդ մետրից ավել՝ $324,5: Այս համեմատությունը չի կարող տարակուսանք չհարուցել, չնայած այն հանգամանքին, որ մոլդովական գազամատակարարման համակարգը նույնպես վերահսկվում է «Գազպրոմ» ընկերության կողմից:

Ինչպես վկայում է միջազգային փորձը, գազի մենաշնորհային համակարգը անհրաժեշտ է բարեփոխել՝ բնագավառում մրցակցության տարբեր ներդնելու միջոցով բարձրացնել դրա արդյունավետությունը: Դա նշանակում է, որ այստեղ ծառայությունները պետք է տրամադրվեն հնարավորին չափ մեծ թվով ինքնուրույն սուբյեկտների կողմից՝ շուկայականին մոտ սակագներով, իսկ իրենք՝ ձեռնարկությունները, պետք է դառնան կարգավորման թափանցիկ գործընթացի սուբյեկտներ: Մոտիվացիայի խթանման և արդյունավետության աճի համար կարևոր է ինքնարկել նաև կարգավորող մարմնի կողմից սակագների ձևավորման ներկա մոտեցման՝ («ծախսեր գումարած») այսպես կոչված «գնային առաստաղի» մեթոդի փոփոխության հարցը: Դա նշանակում է, որ կարգավորող մարմինը ծախսերի և շահույթի նորմատիվների փոխարեն փոխադրող, իրացնող և բաշխող ընկերությունների համար պետք է սահմանի մաքսիմալ գին, ինչը և խթան կհանդիսանա ծախսերի իջեցման և շահույթի ավելացման համար: Առնվազն բաշխումը պետք է իրականացվի փոխկապակցված անձ

չհանդիսացող կազմակերպության կողմից: Դա մրցակցության տարբեր կմտցներ գազի ոլորտում: Կարծում ենք նաև, որ անթույլատրելի է էլեկտրաէներգետիկ ակտիվների և էներգետիկ գործունեության ընդգրկումը գազի համակարգում:

«Գազպրոմի» վերջին տարիների հաշվետվությունները ցույց են տալիս, որ մոնոպոլիստը արդյունահանող ընկերությունից աստիճանաբար վերածվում է տրանսպորտային մոնոպոլիստի: Գազի փոխադրումից ստացվող եկամուտները աճում են ավելի արագ, քան դրա վաճառքից ստացվող եկամուտները: 2010 թ. առաջին եռամսյակի տվյալներով Նորվեգիայի և Քաթարի էներգետիկ ընկերությունները ռուսական «Գազպրոմին» դուրս են մղել եվրոպական շուկայում գազի մատակարարման առաջատար դիրքերից: Ռուսական գազը չափազանց թանկ է: Սփոթ շուկայում գազի գները գրեթե կիսով չափ ցածր են «Գազպրոմի» գներից, որոնց պայմանագրերը, որոնք կնքված են եվրոպական երկրների հետ, կախվածության մեջ են դրված նավթի գներից: Սպառողների շահերը պաշտպանող բազմաթիվ եվրոպական կազմակերպություններ հանդես են գալիս այդ համակարգի վերացման օգտին: Եվրոպական ընկերությունները չեն ցանկանում բնական գազ գնել, նախընտրելով ընդլայնել սեղմված գազի գնման ծավալները Աֆրիկայից և Պարսից ծոցից: Վերջին տարիներին ԱՄՆ-ն ակտիվորեն զարգացնում է վառելիքի այլընտրանքային տեսակի՝ թերթաքարային գազի արդյունահանման նախագծեր, ինչն ի չիք է դարձնում «Գազպրոմի» պլանները՝ կապված ԱՄՆ-ի գազի շուկայում 10% ներկայություն ունենալու հետ: Վերջին տասնամյակում ռուսական գազի կշիռը եվրոպական էներգետիկ շուկայում ընկել է: Ըստ «Գազպրոմի» տվյալների, գազի արտահանումը եվրոպական շուկա 2010 թ. հունվար-մարտին, անցած տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, կրճատվել է 29,7% -ով: Իջել են նաև գազի արտահանումից ստացված եկամուտները: Այս պայմաններում, գլոբալ գազատրանսպորտային համակարգի ստեղծումը «Գազպրոմի» համար կապահովի մանևրի տարածություն: Եվ ընդհակառակը, կփոխրանան մանևրի հնարավորությունները ԱՊՀ երկրների, այդ թվում նաև Հայաստանի համար: Հայաստանի կողմից այլընտրանքային ցանկացած նախագծի իրացման փորձ, որը չի նախատեսելու վերահսկում «Գազպրոմի» կողմից, չի կարող հաջողություն ունենալ: Այսպիսի պայմաններում Հայաստանի կառավարությունը պետք է մշակի համապատասխան համարժեք քաղաքականություն «Գազպրոմի» հետ հարաբերություններում:

Նախատեսվում է անցնել գազի մատակարարման եվրոպական գներին, ինչը նշանակում է, որ դեռևս սպասվում են սակագների նոր բարձրացումներ: Սակագների բարձրացումը, անշուշտ, պարունակում է սոցիալական, տնտեսական և հատկապես ինֆլյացիոն ռիսկեր, ինչն իր հերթին լուրջ հիմնախնդիրներ է առաջացնում երկրի դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության համար: Եթե առայժմ գազի սակագների բացասական սոցիալական ազդեցությունը որոշակի չափով զսպվում է վարչական մեթոդներով, ապա ապագայում դրա համար հնարավորությունները էապես կնվազեն:

Իր հերթին, գազի սակագների բարձրացման բացասական ազդեցությունը մեղմելու համար կառավարության կողմից իրականացվելիք միջոցառումները կարող են ծանր բեռ դառնալ թե ՀՀ քաղաքացիների և թե նաև պետական բյուջեի համար:

Այսպիսով, ամփոփելով վերն ասվածը, հարկ է հավուր պատշաճի ուսումնասիրել առկա, ինչպես նաև նոր ձևավորվող մարտահրավերները, որոնց դիմագրավելու գործում իր մասնակցությունը պետք է ունենա նաև ՀՀ օրենսդիր իշխանությունը:

ՆԱ ԳԱԼԻՍ ԷՐ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ...

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ար գրականության բոլոր մեծերի նման, Հովհաննես Մելքոնյանը ևս ծնունդ առավ ու սկսվեց իր ծննդավայր-բնօրրանից:

Իր պապերի օրրանը Արևմտահայաստանն էր, որտեղից ցեղասպանության յաթաղանը նրանց կտրել ու նետել էր անհուսության և անորոշության հեռուները: Նրա մեծ պապը՝ Մելքոն Մշեցյանը գաղթականի ցուպը ձեռքն առավ 1917 թվականին և հայոց չքնաղ հովիտը՝ Մշո դաշտը թողեց թուրք թշնամուն:

Ոչ միայն Մշո դաշտն ու Մեղրագետը:

Մշեցյան գերդաստանը եղեռնից մազապուրծ մյուս արևմտահայերի նման կորստի մատնած իրենց ողջ պատմությունն էր թողնում սահմանի մյուս կողմում, մինչև օրը հատուցման ու վերադարձի:

Մշո դաշտից մինչև Շիրակի դաշտավայր ձըգվեց Մշեցյան տոհմի գաղթի ուղին:

Եղեռնի ու գաղթի արհավիրքների ծանրության ներքո աշխարհ եկավ նա՝ Հովհաննես Մելքոնյանը:

Անսպասելի էր, արդյո՞ք, նրա ծնունդը որպես գրող:

Հովհաննես Մելքոնյան գրողի ծնունդը պայմանավորված էր հայոց պատմության անցյալ ու ներկա ընթացքի ներքին կանոններով և օրինաչափությամբ:

Նրա ծնունդը օրինաչափություն էր, քանզի չէր կարող չծնվել որպես հայ գրող, որպես սերունդների հիշողության դաշտի կրող, ժառանգող ու փոխանցող: Հովհաննես Մելքոնյանը մտավ գրականություն, որպեսզի նրա միջոցով յուրաքանչյուր հայի ուղեղի և արյան բջիջներում արմատակալի 1915 թվականը՝ հայի և հայոց պատմության ամենամեծ ցավը:

Տարիներով ու տասնամյակներով շարունակ նրա հոգում ահագնացող և բորբոքվող թեման ծնունդ տվեց գրական մի թռիչքի, որը դարձավ եղերերգական պոեմ և 1987 թվականին դրվեց հայ ընթերցողի գրասեղանին:

Հիշողության դաշտի վրա տեղադրվեց վերջին հարյուրամյակների հայոց պատմությունը՝ որպես իրականություն և երազ, որպես նզովք և անեծք ճակատագրին, որպես հիշողության անմարելի լուսարձակ:

Հիշողության դաշտ դարձավ հայոց արյունոտ բախտն ու ճակատագիրը:

Բացառիկ կարևոր մատյան է «Հիշողության դաշտ»-ը:

Հովհաննես Մելքոնյանը, ի հեճուկս պատմության կեղծարարների, գրողական ողջ ուժով բարբառեց այն ճշմարտությունը, որ հայոց ցեղասպանությանը մասնակից են բոլորը՝ ոչ միայն իշխանությունները, այլև թուրքական հասարակության բոլոր շերտերն ու խավերը, որոնց պատել էր

ՆԵՄԵՍԻՍ

հայերի ունեցվածքին ու հարստությանը տեր դառնալու մոլեգին ցանկությունը: Հայոց պատմությունը դարձավ հիշողության համակ դաշտ և զրնգաց բոլոր հոգիներում:

Հայոց և օտար հոգիները ականջալուր եղան անլռելի զանգին:

Զանգը, որը խորհրդանշում է ցեղասպանված ժողովրդի հարության ու վերածնումի հրաշքը:

Ցեղասպանության նահատակները նաև նրա գրականության էջերում և գրականությամբ ոգի առան, վերակենդանացան և աշխարհի ու պատմության առջև վկայություն տվեցին: Վկայություն տվեցին անցած կատարվածի, իրականում տեղի ունեցած զարհուրելի ողբերգության մասին: Փաստեցին ու վկայեցին անուն առ անուն, դեպք առ դեպք, փաստ առ փաստ, մանրամասն առ մանրամասն: Այդ վկայություններից ծնվեց «Ոճիրի բուրգեր» կոթողային աշխատանքը, որը ցեղասպանության զոհերի հոգևոր հուշարձանն է՝ գրչով ու ոգով դաջված մեր սրտերում՝ ի տարբերություն Ծիծեռնակաբերդի բարձունքում կանգնեցված գրանիտե հուշարձանի:

«Ոճիրի բուրգեր»...

Թուրքիայի հավերժական խարանը և համայն մարդկության ամոթն ու խայտառակությունը:

Որքան էլ շատ ժամանակ անցնի 1915 թվականի ողբերգությունից, միևնույն է, «Ոճիրի բուրգեր»-ի էջերից մորթվող մանուկների ճիչեր են լսվելու և կացնակիր ու յաթաղանակիր ոճրագործների գազանաբարո մռունչ-աղաղակն է մարդկության ականջը պատռելու, քանի դեռ երկնքից չի իջել Արդար հատուցման աստված:

Այո՛, այդպես է, «հենց ադպես, ինչպես որ ամեն գիշեր առավոտի արևով է վերջ ունենում, այդպես էլ՝ ամեն մեղք ազնիվ քավությամբ և ամեն ոճիր արդար հատուցմամբ է վերջ ունենում» («Հիշողության դաշտ», Ե, 1987 թ., էջ 25):

Գրողի այս հիշեցում-զգաստացում պատգամը, ասված սրանից գրեթե քառորդ դար առաջ, կարծես հենց հասցեագրված է այսօրվա էրդողաններին ու դավիթօղլուներին, որ նրանց հոգում ևս արթնանա մարդկայնության բույրն ու խիղճը:

Անգամ խորհրդային ճնշիչ օրերին հայ գրող Հովհաննես Մելքոնյանն իր ուղնուծուծով համոզված էր, որ ոճրագործ, ցեղասպան Թուրքիայի հանդեպ լինելու է միջազգային դատավարություն, որը դառնալու է Հայոց Նյուրնբերգը, որտեղ հետմահու դատապարտվելու են 1915 թվականի հայոց եղեռնի կազմակերպիչները:

Նա իր հերոսների շուրթերով խորապես համոզմունք է հայտնել, որ լինելու է այդպես. «Ես այս թղթապանակներում հավաքած բոլոր վկայությունները պահում եմ, որ երբ օրը գա, գալո՞ւ է, ու միջազգային դատավարություն լինի հայոց կոտորածների հարցով, դրանք ներկայացնեմ ատյանին՝ որպես ականատես վկաների ցուցմունքներ» («Հիշողության դաշտ», էջ 129):

Այդպես է, թեկուզև ուշացումով, գրեթե մեկ հարյուրամյակ ուշացումով, սակայն Հայոց Նյուրնբերգը անպայմանորեն կայանալու է և այդ պատմական դատավարության ընթացքում Հովհաննես Մելքոնյան հայ քաղաքացին ու գրողը հանդես է գալու որպես մեղադրող:



Հովհաննես Մելքոնյան

ԴՐՕՇԱԿ
100 տարի առաջ

Թ.№ 3—4 (216) XXI ՏԱՐԻ ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ 1911

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

Դրօշակ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Շրջաբերական

Եւր. Հ.Յ.Դ. Ուս.Միութիւն

Ընկերներ,

Վերջացաւ 3-րդ համագումարը:

Մի աւելորդ անգամ եւս նա եկաւ ապացուցանելու Միութեանս կենսունակութիւնը եւ ամրապնդելու անոր դիրքերը: Զուր չէ եղած մեր հիմնադիր ընկերներու այն գեղեցիկ յղացումը, ընդառաջ գնալու հրամայական պահանջի մը՝ կազմակերպել անհատ ընկերները ոչ թէ մի դրօշի տակ, ուր անոնք անհատապէս մտած էին արդէն, այլ անհատներու բաժանուած ուժերը օգտագործելու հաւաքական գործակցու-թեամբ արդէն նուիրական նպատակի մը իրականացման մէջ, թէեւ աննպաստ հողի վրայ, սակայն խանդավառ բազմութեան մը մէջ: Զուր չեն եղած նաեւ մեր ընկերներու ոգեւորութիւնն ու անդուլ ջանքերը, որով գրեթէ առանց բացառութեան շտապեր էին գալ Համագումարին՝ իրենց անհատական փոքրիկ ուժերը միացնելու մի մեծ գործի շուրջ, ատոր համար պահանջուած մեծ ուժը ստեղծելով:

Համագումարը եղաւ արտայայտիչը Եւրոպայի մէջ ապրող, ոգեւորուող եւ մտածող Դաշնակցական Ուսանողութեան: Այնտեղ պատկերացաւ Միութեանս ամբողջ կացութիւնը: Ուսանողական այնքան այլազան կեանքը երբեք բեռ մը դարձած չէ մեր այն ընկերներու համար, որոնք մեծ մտածողներու շրթունքէն կախուած կամ անոնց երկերու մէջ խորասուզուած՝ կարողացած են յամենայն դէպս սիրած գաղափարի յառաջադիմութեան համար գտնել ժամանակ զոհելու եւ աշխատելու: Պարբերական հաւաքները դաշնակցական մտածողութիւն եւ մթնոլորտ ստեղծելու նոյն քաղաքի մէջ եղողներու համար՝ ցանկութենէ աւելի պահանջի պէս զգալի են եղած եւ դրական արդիւնքներ տուած բոլոր խումբերու մէջն ալ: Այնտեղ հայկականութեան եւ գործնական կեանքի բոլոր նշոյլներէն կտրուած ուսանողութիւնը լսած է, թէ ինչ կը կատարուի հեռուն, մշուշապատ հորիզոններու ետեւ, ուր հայկական կեանքն է սփռուած անտէր եւ բազմակարօտ: Կամ՝ մարդկային գերագոյն Մտքի ծաղիկները ինչպէս կարելի է հաշտեցնել մեր իրականութեան պահանջներու հետ եւ այնտեղ, իբրեւ լուսաւոր ջահ մը, մեր ապագայ մթագնած ուղին լուսաւորել...

Կուսակցական կեանքը, իր այնքան բազմակողմանի շերտաւորումներու մէջ եղած է բուռն հետաքրքր-

րութեան եւ ուսումնասիրութեան բեւեռը, ու անոր օր օրին ստեղծած հրատապ հարցերը իրենց հրամայական պատասխաններով դարձած են տեսակ մը կապ այն ուսանողութեան համար, որ գիտակցութիւնը ունի տանջուած ժողովրդի մը որդին լինելու եւ անոր բեռը թեթեւացնելու համար ուժ եւ կարողութիւն ամբարելու:

Համագումարը տեսաւ, թէ ինչպէս տարիներէ ի վեր Դաշնակցութեան ծրագրած համերաշխութեան եւ համագործակցութեան ջանքերը հարեւան ժողովուրդներու հանդէպ մեր ամբողջ Միութեան մէջ յաճախ արդիւնաւոր կերպով իրականացած են՝ մեր ապագայ գործունէութեան համար հիմքեր մշակելով: Ու յարաբերութիւնները գնալով աւելի կը սղմուին ու կը սերտանան ոչ միայն Եւրոպայի, Տաճկաստանի, Ռուսաստանի, Պարսկաստանի եւ գաղութներու հայ ուսանողութեան միջեւ, այլեւ մեր կողքին, մեզ պէս մտածող ու գործող այլ սոցիալիստական եւ յեղափոխական ուսանողական կազմակերպութիւններու հետ: Այս բոլորը առաւել կամ նուազ չափով արտայայտուեցան, վերագնահատման ենթարկուեցան եւ նոր ծրագիրներու համար հիմք հանդիսացան՝ աւելի խորացնելու մեր գիտակցութիւնը, մեր իդէալներու իրագործման մէջ:

Եւ վերջապէս, «Ուսանողը»՝ մեր այնքան փայփայած եւ այնքան արտայայտիչ գործը: Երիտասարդ՝ մենք ալ, այն ալ, բայց մեր կարճ գործունէութիւնն ու պատմութիւնը տուած են մեզ պէտք եղած փորձառութիւնը - գոնէ այդպէս կը մտածենք մենք - պակասները դարմանելու եւ դնելու զայն ցանկալի բարձրութեան մը վրայ. «Ուսանողը» ոչ միայն մեր արտադրութիւնն է եւ պատկերացումը, այլեւ մեր մէկ մասը՝ անբաժանելի եւ անհրաժեշտ: Նա դարձաւ խարիսխը մեր գործունէութեան եւ ալ աւելի՝ ապագայ գործունէութեան: Համագումարը այնքան ջերմ վերաբերմունք եւ հոգածութիւն ցոյց տուաւ «Ուսանողի» հանդէպ, որ անոր վճիռներն ու որոշումները ընդարձակ տեղ մը բռնելով պէտք է երեւան գան տարեկան Տեղեկագրի մէջ, որ շուտով լոյս է տեսնելու:

Համագումարը իր աշխատանքները արդիւնաւորուած տեսնելու համար՝ ընտրեց համապատասխան Մարմինը:

Գիտակ եւ պարտաճանաչ՝ իր բոլոր յանձնառումներուն, Գործադիր Մարմինը կը կարծէ կատարած լինել Համագումարի՝ իր վրայ դրած պարտաւորութիւնները կոչ ընելով բոլոր ընկերներուն՝ միանալ սիրած գործի շուրջը, ստեղծել եռուն խմբական կեանք, արծարծել եւ սերտացնել համերաշխութեան կապերը թէ ընկերներու, թէ Սոց. Յեղ. կուսակցութիւններու եւ թէ հարեւան ցեղերու հետ, վերջ տալ անձնական հակամարտութիւններուն, բարձր պահել կուսակցական գիտակցութիւնը եւ Դաշնակցութեան հոյակապ դրօշը, որու ծածանումներու տակ մենք ալ մեր աշխատութեան բաժինը պիտի բերենք, միշտ վստահ մեր բոլոր ընկերներու աջակցութեան եւ եռանդի վրայ:

Այս բոլորի համար անհրաժեշտ են՝ գործնական մասնակցութեան հետ նաեւ տեսական պատրաստութիւն, որ մեր ուղղակի պարտականութիւնն է եւ որու վրայ կը հրաւիրենք մեր ընկերներու ուշադրութիւնը, ի նկատի ունենալով այն միջավայրը, ուր կ'ապրինք, եւ այն՝ ուր մենք պիտի գործենք իրականացնելու համար մեր կուսակցական իդէալները:

Վստահ ենք, որ մեր ընկերները մեզի հետ միասին ձեռք ձեռքի տուած կը նպաստեն իրագործելու այն ծրագիրները, որ մշակեց 3-րդ Համագումարը եւ այնպէս ներկայանալու 4-րդ Համագումարին՝ միշտ աւելի գիտակից եւ պարտաճանաչ Միութեանս եւ առաւելապէս Դաշնակցութեան պատմական առաքելութեան:

Ընկերական բարեւներով՝ Գործադիր Մարմին
1911, ապրիլ 15

Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ

Երևան, 2010, 160 էջ



«Այդ տեղահանությունների հրամանն արձակելով՝ թուրքական իշխանությունները միմիայն ստորագրում էին մի ամբողջ ցեղի մահվան վճիռը: Նրանք դա լավ էին գիտակցում և ինձ հետ խոսակցությունների ժամանակ նույնիսկ չէին փորձում [այդ] փաստը քողարկել:

Համոզված եմ, որ մարդկության պատմության այսօրինակ սարսափելի դեպք հայտնի չէ: Անցյալում տեղի ունեցած մեծ կոտորածներն ու հալածանքները գրեթե աննշան են թվում հայ ժողովրդի՝ 1915 թվականին կրած տառապանքների հետ համեմատելիս»: 1913-1916 թվականներին Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի այս խոսքերով է բացվում Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի առթիվ ՀՀ Սփյուռքի նախարարության հրատարակած ալբոմը:

Գրքում ի մի են բերված Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և արտերկրում գտնվող թվով 288 կոթողները պատկերող լուսանկարները: Երկրագնդի բո-

լոր ծագերում վեր խոյացող այդ քարե վկաները ոչ միայն խորհրդանշում են մեր ժողովրդի պատմության ամենադաժան իրադարձությունը, նրա կրած տառապանքն ու մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը, այլև խոսում են մարդու հայ տեսակի հարատևության, իր վիշտը տանելու տոկունության, պատմության դասերը համամարդկային շահերին ծառայեցնելու նրա ունակության մասին: Այդ հուշարձանները նաև Հայոց ցեղասպանության ճանաչման ճանապարհի երկար, իր հարյուրամյակի շեմը թակող պայքարի լուռ և միևնույն ժամանակ ամենախոսուն վկաներն են:

Պատկերագրքի նախաբանում ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը գրում է. «1915 թվականի մայիսի 24-ին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները միացյալ հանդես եկան Թուրքիայի կառավարությանն ուղղված հրապարակային զգուշացմամբ: Այդ հայտարարությունը համարվում է Հայոց ցեղասպանությունը դատապարտող առաջին միջազգային փաստաթուղթը, որտեղ հայերի դեմ կատարված ոճրագործությունը որակվում է որպես «Թուրքիայի կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված նոր հանցագործություն»: Այնուհետև հայկական սփյուռքի ջանքերով սկիզբ առավ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, որին հետագայում միացավ հայոց անկախ պետականությունը: Մի շարք պետություններ՝ ԱՄՆ-ը, Արգենտինան, Բելգիան, Գերմանիան, Իսպանիան, Իտալիան, Լեհաստանը, Լիբանանը, Լիտվան, Կանադան, Կիպրոսը, Հունաստանը, Նիդեռլանդները, Շվեդիան, Չիլին, Ռուսաստանը, Սլովակիան, Վենեսուելան, Ուրուգվայը, Ֆրանսիան, Վատիկանը, ինչպես նաև Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, Եվրոպական խորհրդարանը և այլ միջազգային կառույցներ ճանաչել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը:

Խորհրդային վարչակարգի պայմաններում առաջին անգամ 1965 թվականի ապրիլի 24-ին Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի առթիվ բազմահազարանոց ցույց տեղի ունեցավ Երևանում, որի արդյունքում 1967 թվականին Ծիծեռնակաբերդի բարձունքում բացվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրը: Հուշապատի վերջնամասում ամփոփված են նաև օտարազգի այն հասարակական-քաղաքական գործիչների, մտավորականների գերեզմաններից բերված հողով լի սափորները, ովքեր իրենց բողոքն ու ցասումն են արտահայտել ընդդեմ Հայոց ցեղասպանության: Նրանց թվում են Արմին Վեգները, Աննա Հեդվիգ Բյուլը, Հենրի Մորգենթաուն, Ֆրանց Վերֆելը, Յոհաննես Լեփսիուսը, Ջեյմս Բրայսը, Անատոլ Ֆրանսը, Ջակոմո Գորինին, Բենեդիկտոս XV-ը, Ֆրիտյոֆ Նանսենը, Բոդիլ Բյորնը, Ֆայեզ ալ Հուսեյնը: Ըստ Հրանուշ Հակոբյանի՝ պատկերագիրքը վկայում է նաև Սփյուռքի կազմակերպությունների, կառույցների և անհատների՝ Հայ դատի պայքարին հավատարմության մասին, Այն նաև երախտագիտության յուրօրինակ արտահայտություն է այն երկրների ժողովուրդներին, պետական ու տեղական իշխանություններին, որոնք նպաստել են իրենց երկրներում, իրենց համայնքներում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների և համալիրների ստեղծմանը:

Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող կոթողների լուսանկարները պատկերագրքում զետեղված են այբբենական կարգով՝ ըստ երկրների և ըստ ՀՀ մարզերի: Նրանց ստեղծման ժամանակագրության մասին կարելի է պատկերացում կազմել լուսանկարներից յուրաքանչյուրի կողքին նշված թվականից: Հուշարձանների մասին հնարավոր մյուս տեղեկությունները, ինչպես նաև պատկերագրքի նախաբանն ու լուսանկարների ցանկը տրված են երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

Նշենք նաև, որ հուշարձանների շարքն ամբողջանում է Բերձորում (ԼՂՀ) 2005 թվականին տեղադրված Ցեղասպանության 90-ամյակին նվիրված հոյակերտ խաչքարի պատկերով (հեղ. Հ. Մկրտչյան):

Պատկերագրքի ձևավորողն է Արամ Ուռուտյանը:

Էդիկ Անդրեասյան

Հրաչ Հայրապետյան

1950թ. - Ծնվել է f. Դիլիջանում:
1968-1974թթ. - Սովորել է Փ. Թերլեմեզյանի անվ. գեղարվեստի ուսումնարանում (գեղանկարի բաժին):
1974-1979թթ. - Ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտ (դիզայնի բաժին):
1982թ.- Հայաստանի երիտասարդ նկարիչների միության անդամ (գեղարվեստի բաժին):
Մասնակցել է հանրապետական ցուցահանդեսների՝ գրաֆիկական և ջրաներկ աշխատանքներով:
2001թ.- Հայաստանի նկարիչների միության անդամ (գրաֆիկայի բաժին):
2004թ.- Անհատական ցուցահանդեսներով հանդես է եկել Դանիայի մի շարք քաղաքներում:
2005թ.- Դարձել է Դանիայի Հիլլերոդ f., "Aktive Kunst" միության անդամ:

ԴՐՈՇԱԿ

Պատկերասրահ





MONUMENTO ERIGIDO EM
MEMÓRIA DE UM MILHÃO E MEIO
DE MÁRTIRES ARMÊNIOS
MASSACRADOS PELOS TURCOS
EM ABRIL DE 1915.
MESMO QUE ACORRENTEM
MEUS PÉS, AMARREM
MINHAS MÃOS, TAPEM MINHA
BOCA, MEU CORAÇÃO
GRITARÁ POR LIBERDADE.

ԳԵՐԱՅԻԿ